



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵՆՏ ԳՈՒԼԷԻ

ԱԶԳԱՅԻՆ ՀԻՒԱՆԳԱՆՈՅԻ



ՎԱԻԵՐԱՅԵԱԼ

ԱԶԳ. ԿԵԳՐԱՆՍԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵՆԷՆ



✓ Ա. Ե.
1143

պ

1999

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԷՏԻ ԳՈՒԼԷԻ


ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

(Ս. ՓՐԿՉԻ ՇԻԱՆԴԱՆՈՑ)



ՎԱԻԵՐԱՅԵԱԼ

ԱԶԳ. ԿԵԳՐՈՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹԵՆԷՆ



Անուշտ Հասասութիւնս իր հիմնարկութեան բուականին իսկ ունեցած է մասնաւոր կանոնագիր , որ ըստ իր ստացած կարեւորութեան եւ ժամանակի պահանջմանց փոփոխութիւններ կրած է : Հաւանականաբար ձեռագիր մնացած են անոնք՝ զի հնար չեղաւ մեզ 1893ի հրատարակեալ ներքին կանոնագրէ առաջ խմբագրեալ որ եւ է կանոնագիր ձեռք անցրնել : Այդ 1893ի կանոնագիրը՝ վաւերացեալ ի սառն ժողովոյ Ազգային Կեդրոնական Վարչութեան՝ միայն Հասասութեանս Հիւանդանոցի եւ Յիմարանոցի հիւղերու ծառայութիւնները կը շօշափէր : Մեզ կանխող Վարչական պատուարժան Հոգաբարձութիւնը պէտք զգաց Հասասութեանս անէն հիւղերը ու մասերը ընդգրկող կանոնագրութիւն մ'ունենալ եւ փորձեց իսկ զայն խմբագրել , գործ որ մեզ վիճակեցաւ ի գրուխ հասնել աշխատասիրութեամբ Հիւանդանոցիս բժշկապետ Տօֆ . Ն . Տաղաւարեանի : Կանոնագիրս Հոգաբարձութեանս հաւանութեան արժանանալէ վերջ դրկուեցաւ Ազգ . Կեդրոնական Վարչութեան՝ որ յետ քննութեան վաւերացուց զայն իւր 1900 Նոյ . 17ի նստին եւ դարձուց մեզ ի գործադրութիւն Դեկտ . 5 բուականակիր գրութեամբ :

Հոգաբարձութիւնս զայս սպագրութեան յանձնելու պահուն պարտք կը զգայ իր շնորհակալութիւնն յայտնել զայն խմբագրող Տօֆ . Ն . Տաղաւարեան եֆեհեհի :

Անդամ Հոգաբարձութեան Եէտի Գուլէի Ազգ . Հասասութեան

Դանձապետ	Առնճադպիր	Առնճապետ
ՊՕՂՈՍ ԷՔՕԷՐՃԵԱՆ	Գ . Մ . ԱԼԵԱՆԱՔԵԱՆ	ՊԱՏՐԻԿ ԿԻՒՂՋԵԿԵԱՆ
Անդամ		
ՏՕԲ . ԽՈՐԱՍԱՆՃԵԱՆ		ՏԻԳՐԱՆ Ա . ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՏՕԲ . Ա . ՆԱԶԱՐԵԱՆ		Գ ԿԻՄԻՆՇԿԷՐՏԱՆ
ԳՐԻԳՈՐ Խ . ԷՂՂԵՆԵԱՆ		ՅԱՎՈՐ ՍԹՈՄՊՈՒԼԵԱՆ

Յունվ . 12/25 1901, Կ . Պոլիս

29-1146



1143-81

ԿԱՆՈՆԱԳՐՈՒԹԻՒՆ

ԵԼՏԻ ԳՈՒԼԵԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ

(Ս. ՓՐԿՁԻ ՇԻՒԱՆԴԱՆՈՑ)

Ա. — Վ. Ա. Ր. Ի. Զ. Մ. Ա. Ր. Մ. Ի. Ն. Ք.

1. ՀՈԴԱՐԱՐԾՈՒԹԻՒՆ

Յօդուած 1. — Հաստատութեանս վարիչ Մարմինն է Հոգաբարձութիւնն՝ որ Ազգ. Կեդր. վարչութեան Գաղաքական Ժողովէն կ'ընտրուի, և կը բաղկանայ ինն անդամներէ՝ որոց երկուքը բժիշկ և մին իրաւագէտ պարտի բլլալ:

Յօդ. 2. — Հոգաբարձութեան պաշտօնն է այս Հաստատութիւնն և անոր սեպհական կալուածներն ու եկամուտները անտեսել, ու անոնց հասոյթով և ազգայնոց նուիրատուութեամբ մատակարարել զայն:

Յօդ. 3. — Հոգաբարձութիւնը տարեկան տեղեկագրութիւն կը պարզէ Հաստատութեանս զանազան ճիւղերու վիճակն և իր տարեկան գործառնութիւնները:

Յօդ. 4. — Հոգաբարձութիւնը պատասխանատու է Ազգ. Կեդրոնական վարչութեան, և անոր հսկողութեան ներքեւ կը գտնուի:

Յօղ . 5 . — Հոգաբարձութեան պաշտօնի տեւողութիւնն է չորս տարի : Հոգաբարձութեան մարմինն ամբողջութեամբ եւ կամ մասնաւոր անդամները կրնան անմիջապէս վերընարուիլ :

2. ԽՆԱՄԱԿԱԼՈՒԹՅՈՒՆ

Յօղ . 6 . — Հոգաբարձութիւնն ունի իրեն օժանդակ երկու Խնամակալութիւն , մին տիկնանց եւ միւսն արւանց , որք Հոգաբարձութենէն կ'ընտրուին :

Յօղ . 7 . — Տիկնանց խնամակալութիւնն հինգ անդամուհիներէ կը բաղկանայ , որոց պաշտօնն է առանին խնդրոց մասին Հոգաբարձութեան օժանդակել : Հաստատութեանս համայն պատասպարելոց հանդերձեղինաց պատրաստութեան , լուացքի , մաքրութեան , աղջկանց Որբանոցի՝ ձեռագործի եւ այլ արհեստից վերին հսկողութիւնն իրեն անկ է : Նաեւ կանանց Հիւանդանոցի , Ծերանոցի ու Անկեղանոցի խնդրոց մասին Հոգաբարձութեան խորհրդատու մարմին մ'է :

Յօղ . 8 . — Արւանց կամ Որբանոցի Խնամակալութիւնն եւս հինգ անդամներէ կը բաղկանայ , որոց մին Հոգաբարձութեան անդամներէն է : Որբանոցի Խնամակալութեան պաշտօնն է՝ Որբանոցի ուսումնական եւ արհեստական ծրագրին գործադրութեան ու յառաջդիմութեան վերին հսկողութիւնը :

Յօղ . 9 . — Երկու օժանդակ Խնամակալութիւնները պատասխանատու են Հոգաբարձութեան եւ իրենց պաշտօնը վերջ կը դանէ Հոգաբարձութեան հրաժարմամբ :

3. ԳՐԱՍՆՆԵԱԿ ՀՈԳԱՐԱՐՁՈՒԹԵԱՆ

Յօղ . 10 . — Հոգաբարձութիւնն ունի քաղաքին մէջ մասնաւոր գրասենեակ մը , ուր կը գումարէ իր նիստերն եւ

որոց պաշտօնէութեան միջոցաւ կը վարէ Հաստատութեան գործերն եւ յարաբերութեան մէջ կը զանուի Հաստատութեան Տնօրէնութեան հետ :

Յօղ . 11 . — Հոգաբարձութեան գրասենեակի պաշտօնէութիւնը կը բաղկանայ 7 անձերէ որք են .

Ա . — Տեսուչ՝ որ պեան է գրասենեակին , ընտրուալ Հոգաբարձութենէն եւ անոր պատասխանատու :

Գրասենեակի տեսչի պաշտօնն է Հոգաբարձութեան որոշումները գործադրել եւ հրամաններն հաղորդել Հաստատութեան Տնօրէնութեան , Տնօրէնութեան կողմանէ եկած առօրեայ օրագրութեանց համեմատ սովորական գործերը կատարել , անոնց կարեւորներու որոշումն եւ գործադրութիւնը Հոգաբարձութեան վերապահելով , Հաստատութեան հասոյթները գանձել , եւ անդ ի պատասպարութիւն դիմողաց նիւթական կարողութեան մասին քննութիւն կատարելով՝ ըստ այնմ որոշել անոնց ամսաթոշակը (Յօղ . 39) կամ ձրիութիւնն , եւ մտից արտօնագիր տալ :

Բ . — Համարակալ-Քարտուղար , ընտրուալ Հոգաբարձութենէն եւ պատասխանատու անոր :

Համարակալ - Քարտուղարի պաշտօնն է հաստատութեան բոլոր գործառնութեանց հաշուետմարները բանել , Հոգաբարձութեան նիստերու ներկայ գտնուելով՝ արձանագրութիւնները պատրաստել , պէտք եղած գրութիւնները խմբագրել եւ ի բացակայութեան տեսչին անոր փոխանորդութիւնն ընել :

Գ . — Գրագրի օգնական .


Դ . — Մասակարգար , որ Հաստատութեանս պէտքերը կը գնէ .

Ե . — Հաւաքիչ որ կալուածոց վարձքերն եւ պատասպարելոց թոշակները կը գանձէ .

Զ . — Մոմատան պատճենայ .

Է . — Սպասաւոր .

Այս վերջին հինգը պատասխանատու են գրասենեակի տեսչին եւ կ'ընտրուին Հոգաբարձութենէն :



Բ. Տ Ն Օ Ր Է Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

1. Տ Ն Օ Ր Է Ն

Յօդ. 12. — Տնօրէնն Հոգաբարձութեան ներկայացուցիչն է, և յանուն Հոգաբարձութեան ու ըստ անոր հրահանգաց և ներկայ կանոնադրի արամադրութեանց կը վարէ Հաստատութիւնը:

Յօդ. 13. — Տնօրէնն Հոգաբարձութեանէն կ'ընտրուի և պատասխանատու է անոր:

Յօդ. 14. — Տնօրէնը վարչական կարողութեան տէր և վստահութեան արժանի անձ մը պէտք է ըլլայ:

Յօդ. 15. — Տնօրէնը պարտի պաշտօնէից պարտականութեանց կատարման հսկել, աւօրեայ օրագրութեամբ տեղեկագրել Հոգաբարձութեան՝ Հաստատութեան պէտքերը: Փոքր և քիչ քանակի ծախսերու համար ու հարկեցուցիչ պատահականութեանց ատեն մինչեւ ամսական 1000 զրջ, ի ծախք մ'ընելու արտօնեալ է: Տնօրէնը պարտի պատասխարկոց ճաշացուցակը պատրաստել ու անոնց պատրաստութեան հսկել, թողախուր պատասխարկոց ամսականները գանձել, պաշտօնէից ամսականները վճարել, ամսօրեայ ելեմտից հաշիւները Հոգաբարձութեան հաղորդել, պատասխարկոց ամսականներն ի գրասենեակի Հոգաբարձութեան յղել, պաշտօնէից և պատասխարկոց խնդիրները քննել ու անոնց վերջ տալ, կարևորները միայն հաղորդելով Հոգաբարձութեան:

Յօդ. 16. — Տնօրէնը պարտի տիւ և գիշեր Հաստատութեան մէջ մնալ. շաբաթը մէկ օր միայն կըրնայ բացալիլ, նոյն միջոցին իրեն փոխանորդ կարգելով գրասենեակի պաշտօնէից մին՝ իր (Տնօրէնին) պատասխանատուութեան ներքեւ:

Յօդ. 17. — Տնօրէնն յանցաւոր պաշտօնէից մասին Հաստատութեան պատժական օրինաց (Յօդ. 282, 283, 285) համաձայն կը վարուի:

Յօդ. 18. — Երբ հիւանդի մը վիճակը ծանրանայ, Տնօրէնը՝ բժիշկին ազդարարութեան վրայ՝ պարտի անմիջապէս մատրան պաշտօնէութեան իմացնել անոր հոգևոր պարտականութիւնները կատարել տալու համար և հիւանդին վիճակն իմացնել իր ընտանեաց կամ պաշտպանին:

2. ՓՈՒՆ — ՏՆՕՐԷՆ ԵՒ ՔՆՆԻՉ

Յօդ. 19. — Եթէ Հոգաբարձութիւնն արժան համարի ունենալ մի փոխ-տնօրէն, սա տնօրէնի օգնական մը կը լինի, անոր հրամանները կը գործադրէ Հաստատութեան մէջ ու անոր բացակայութեան դայն կը փոխանորդէ: Փոխ-տնօրէնը պատասխանատու է Հոգաբարձութեան և տնօրէնին:

Յօդ. 20. — Եթէ հիւանդանոցի համար մասնաւոր քննիչ մ'ունենալ արժան դատուի, սա պարտի բժիշկ ըլլալ, Հոգաբարձութեան կողմանէ ընտրեալ, որ ի հարկին խորհրդատու մ'է նաև Հոգաբարձութեան. յանակնկալս կ'այցելէ Հաստատութիւնը, կը հսկէ կանոնադրութեան գործադրութեան, և առ այս պէտք եղած հրահանգները կուտայ Տնօրէնութեան և կը տեղեկագրէ Հոգաբարձութեան: Քննիչը պատասխանատու է Հոգաբարձութեան:

3. ԳՐԱՍԵՆԵԿԱՆ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ

Յօդ. 21. — Տնօրէնութեան գրասենեակին մէջ կը գրասենուին 5 պաշտօնէայք, որք են.

Ա. — Իււանապիս, որոյ պաշտօնն է աւօրեայ օրագրութեամբ տեղեկագրել Հոգաբարձութեան՝ Հաստատութեանս

մէջ տեղի ունեցած կարեւոր գործառնութիւններն և պէտքերն՝ ըստ տնօրէնի հրահանգաց (այս օրագրութիւնները կէս օրէն առաջ հասնելու են Հոգաբարձութեան սենեակն), ընդունուած, արձակուած և վախճանած պատասպարելոյ արձանագրութիւններն ընել, դրամական գործողութիւնները ճշդել :

Բ.—Քարտուղար, որոյ պաշտօնն է դիւանապետի աշխատութեանց օգնել և հարկ եղած գրութիւններն ընել :

Գ.— Գործակաւար գրասենեկի, որ Հաստատութեան կողմանէ զրկուելիք օրագրութիւնն անձամբ կը տանի ամէն օր Հոգաբարձութեան գրասենեակը, տնօրէնի երբեմն գրութեանց մասին բանիւ բերանոյ բացատրութիւն կուտայ, և Հոգաբարձութեան գրասենեկի գրաւոր ու բերանացի հրահանգները կը հաղորդէ Հաստատութեան Տնօրէնութեան :

Դ.— Օժանդակ գրագիր, որ կը գործածուի իբր ընդօրինակիչ և առաջնորդ այցելուաց :

Ե.— Լրատար, որ ծանրացած հիւանդաց և մեռելոյ լուրերը կը հաղորդէ իրենց ընտանեաց և պաշտպաններուն :

Յօդ. 22. — Դիւանապետի հսկողութեան յանձնուած են նաև Հաստատութեան Մայր մատենադարանն և Դիւանը (Archives) :

4. ՍՊԱՍԱՐԿՈՒԹ ՏՆՕՐԷՆՈՒԹԵԱՆ ՕՍԵՐԻ

Յօդ. 23. — Տնօրէնութեան յարկի սպասաւորք թուով երկուք են :

Ա. Սեղանապետ, որ Տնօրէնութեան յարկի սեղանին ու սպասուց մաքրութեան կը ծառայէ :

Բ. Սրնեփ, որ Տնօրէնութեան յարկի մաքրութեան խընամքն ունի և սուրճ կը պատրաստէ :

Գ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՃԻՂԵՐԸ

Յօդ. 24. — Հաստատութիւնը վեց ճիւղերէ կը բաղկանայ : 1. Հիւանդանոց, 2. Յիմարանոց, 3. Մեռանոց, 4. Անկեղանոց, 5. Ուսանողք, 6. Որբանոց և 7. Մոմարան : Այս զանազան ճիւղերն ունին իրենց տեսուչները կամ պետերն, որք Հոգաբարձութեան կ'ընտրուին և պատասխանատու են Հոգաբարձութեան և Տնօրէնութեան :

1. Հ Ի Ի Ա Ն Դ Ա Ն Ո Յ

Ա. ՀԻՒՆԴԱՍՐՈՒՔ

Յօդ. 25. — Հիւանդանոցը կը բաժնուի երկու գլխաւոր բաժնի. Ա. Ներքին հիւանդութեանց բաժին, ուր ներքին հիւանդութիւններէ զատ կը խնամուին նաև մորթի և ատրոփիտեան հիւանդութեանց ենթարկեալներն, և Բ. Արտաքին հիւանդութեանց կամ վիրաբուժական բաժին, ուր բուն վիրաբուժական ճիւղէն զատ՝ կը դարմանուին նաև աչքի, ականջի, կոկորդի և քթի հիւանդութիւնք և տեղի կ'ունենան ծննդաբերութիւնք :

Յօդ. 26. — Ներքին հիւանդութեանց բաժնոյն մէջ ուռականութեան ենթարկեալք (tuberculeux), յիմար հիւանդք, տարախոտիկ հիւանդութեամբ վարակեալք, և անդամալոյծք անջատ ըլլալու են բնդհանուր հիւանդաց սրահէն և ունենալու են մասնաւոր սրահներ :

Արտաքին հիւանդութեանց բաժնոյն մէջ թարախաւոր հիւանդներն անջատ սրահ մ'ունենալու են :

Յօդ. 27. — Մինչև 7 տարեկան հիւանդ մանչերն և աղջիկները կանանց Հիւանդանոցը մասնաւոր սրահ մ'ունենալու են :

Յօդ. 28. — Հիւանդանոցի մէջ ստքի վրայ ելնող հիւանդացի վէրքերը դարմանելու յատուկ խուցեր գտնուելու են :

Յօդ. 29. — Հիւանդանոցի մէջ իսկ հիւանդաց տրամագրութեան տակ կը դառնուն ընթերցանութեան մատենադարան մը, իրենց այցելուներն ընդունելու համար հիւրանոց մը եւ լոգարան մը, ուր ըստ բժիշկի հրամանին լուսանկարներ կ'ընդունին :

Յօդ. 30. — Հիւանդանոցի մէջ ընդհանուր սրահներէն զատ կան նաեւ մասնաւոր սենեակներ մէկ կամ երկու անկողիննոց, ուր կը դրուին ամսական 3 ոսկի կամ օրական 10 դրչ. եւ աւելի վճարողներն եւ տարափոխիկ հիւանդութեանց ենթարկեալները :

Յօդ. 31. — Սրահներու մէջ մէն մի հիւանդի համար պէտք է առնուազն 25 խոր. մէթր օդ, ուստի անկողիններու թիւը եւ մահիճներու իրարմէ ունեցած հեռաւորութիւնը պէտք է այս հիման վրայ որոշել :

Յօդ. 32. — Սրահներու մէջ առանց հիւանդաց փնաս հասցնելու՝ օդը սաէսլ փոխելու է, նամանաւանդ ուռափնասուրաց սրահներն, որոց սրահի սրատուհանաց վերին մասերը գրեթէ միշտ բաց մնալու են :

Յօդ. 33. — Սրահներու պատերը տարին գոնէ երկու անգամ բռնելու է, իսկ տարափոխիկ հիւանդութեանց յատուկ սրահները, գոնէ ամիսն անգամ մը հականերտական լուծոյթով մաքրելու է :

Յօդ. 34. — Սրահներու եւ մասնաւոր սենեկաց ջերմութիւնը ձմեռ ատեն ըլլալու է գոնէ 16° եւ երբեք 20°էն աւելի :

Յօդ. 35. — Հիւանդասրահները, նրբանցքներն ու սանդուխներն ամէն օր առաւօտուն աւրուելու եւ թաց լաթով սրբուելու են, ի բաց առեալ ուռափնասութեան ենթարկելոց սրահներէն՝ որք երբեք աւրուելու չեն, այլ անոնց տախտակամածները թաց լաթով սրբուելու են միայն :

Յօդ. 36. — Սրահները, նրբանցքները, ճէմիչները եւ սանդուխները զիշերները լուսաւորուած ըլլալու են :

Յօդ. 37. — Ճէմիչները միշտ մաքուր եւ դարչահատութենէ զերծ պահուելու են :

Բ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ Ն ՀԻՒԱՆԴԱՅ

Յօդ. 38. — Ազգային պաշտօնական մարմնոց կողմանէ եւ կամ իրենց խնդրանօք Հիւանդանոց մտնել ուզողք եւ կամ անոնց պաշտպանք պարտին Հոգաբարձութեան դրասենեակը դիմել եւ անդ մտից արտօնագիր ընդունելով՝ Հիւանդանոց գալ. բացառիկ եւ սխալողական պարագաներու եւ Սրբազան Պատրիարքի յատուկ հրամանին առթիւ միայն տնօրէնը կրնայ հիւանդ ընդունիլ ամսականաւոր կամ ձրի, եւ տեղեկագրել օրագրութեամբ :

Յօդ. 39. — Մասնաւոր սենեակ ուզող հիւանդները պարտին վճարել օրական 10-20 դրչ, եւ կամ ամսական 3-5 ոսկի, նուազ վճարողներն ընդհանուր սրահից մէջ կ'ընդունուին :

Յօդ. 40. — Հիւանդք գոնէ մէկ ամսուան դուամարը կանխիկ վճարելու են, մեկնած ատեննին գոնէ 15 օրուան դուամարը վար դրուելով աւելորդն եւ կը տրուի :

Յօդ. 41. — Ամէն հիւանդ ի Հիւանդանոց մտից ատեն՝ բժշկաց կողմանէ քննուելով՝ իրեն յատուկ սրահը կը շարժուի, լոգանք ընդունելէ եւ Հիւանդանոցի համազգեստն հագնելէ վերջ : Խրատ տկար հիւանդները միայն լոգանքէ զերծ կը մնան բժշկական որոշմամբ :

Յօդ. 42. — Հիւանդին դրամն ու արժէքաւոր առարկաները տնօրէնին կը յանձնուին Հոգաբարձութեան գրասենեակը զրկուելու համար, իսկ զգեստները մասնաւոր պարկերու մէջ ամփոփուելով հանդերձապետի խնամոց յանձնեալ մասնաւոր միութրանոցը (չնցոտատուն) կը ղետեղուին, Ըզգեստեղինաց ցուցակն հիւանդաթերթի վրայ կը գրուի, իսկ աւանդի մասին տնօրէնն ընկալագիր մը կուտայ :

Յօդ. 43. — Կարողութեան տէր անձինք վիրարութա-

կան գործողութեան համար մասնաւոր և չափաւոր գումար մը պարտին վճարել Տնօրէնութեան, որ այդ գումարի մէկ երրորդը Հիւանդանոցի ծախուց համար վար դնելով՝ մնացեալը կը բաժնէ վիրարութիւն և անոր օժանդակաց:

Գ. Հ Ի Ի Ա Ն Դ Ք

Յօդ. 44. — Հիւանդք ամէն օր կը քննուին բժշկաց կողմէնէ և պէտք եղած դեղերը կ'ընդունին:

Յօդ. 45. — Հիւանդաց սնունդները բժշկաց կողմանէ սահմանուածին համաձայն կը արուին եւ բոս Հաստատութեան կանոնաց արամադրութեան (Յօդ. 262-263):

Յօդ. 46. — Հիւանդներն իրենց սնունդը կ'ընդունին օրն երեք անգամ (առաւօտ, ցերեկ, երեկոյ) հիւանդասրահներու մէջ գանուող մասնաւոր սեղաններու վրայ, և միայն անկարող հիւանդներն իրենց անկողնոյն մէջ կը ճաշեն:

Յօդ. 47. — Սնունդները կը բաշխուին հսկող մայրապետի ու մատակարարի հսկողութեան տակ՝ բաշխիչ պաշտօնէին կողմանէ:

Յօդ. 48. — Ըստ Հաստատութեան ընդհանուր օրինաց, հիւանդք եւս շարաթն անգամ մը ճերմակեղէն կը փոխեն և 15 օրը անգամ մը անկողնոյ սաւան. սակայն հիւանդաց համար եթէ պէտքը զգացուի, աւելի ստէպ և նոյն խի օրը քանի մ'անգամ ճերմակեղէն ու սաւան կը փոխուի:

Յօդ. 49. — Հաստատութեան սափրիչն ի հարկին կ'աճիլէ հիւանդներն և անոնց մազերը կը կտրէ:

Յօդ. 50. — Հիւանդները պարտին բժշկաց պատուէրներուն և Հիւանդանոցի կանոնաց կատարելապէս համակերպիլ:

Յօդ. 51. — Բժշկական այցելութեան պահուն ամէն հիւանդ պէտք է իր անկողնոյն մէջ գանուի:

Յօդ. 52. — Հիւանդք աւանց բժշկին գիտութեան դրսէն ուսելիք կամ ըմպելիք ընդունելու չեն:

Յօդ. 53. — Սուր հիւանդութեանց յատուկ սրահներու

մէջ հիւանդներու արգիլեալ է ծխել. վիրարութեան և տեւական հիւանդութեանց ենթարկեալք և անդամալոյծք կըրնան իրենց անկողնոյն մէջ ծխել: Ուսականաւորաց յատուկ սրահներու մէջ ծխելն իսպառ արգիլեալ է:

Յօդ. 54. — Հիւանդ մը իր գանուած սրահէն դատ՝ ուրիշ սրահ մը չկրնար մտնել:

Յօդ. 55. — Հիւանդներն բժշկաց հրամանաւ միայն Հիւանդանոցի պարտէզն կրնան ելնել, սակայն երբեք դռնէն դուրս, ոչ ալ Յիմարանոցը, Խոհանոցը, Մասանը և Դեղարանը երթալ:

Յօդ. 56. — Եթէ հիւանդներն որ եւ է հիմնաւոր գիտողութիւն, բողբ կամ դանդաւտ ունենան՝ կարող են ամենայն վստահութեամբ դիմել իրենց բժշկին, Տնօրէնին եւ մինչեւ խի Հոգարարձութեան, որք յօժարակամ անոնց խնդիրը նկատողութեան կ'առնուն:

Յօդ. 57. — Հիւանդ մը առանց իր բժշկին գիտութեան՝ Հիւանդանոցէն չկրնար արձակուիլ. արձակման օրը բժիշկը պարտի հիւանդաթերթին վրայ հիւանդին ներկայ վիճակը նշանակել (բժեկեալ, բարւոճեալ կամ արձակեալ իր խնդրանոց):

Յօդ. 58. — Եթէ հիւանդ մը այնպիսի յանցանաց մէջ գանուի որոյ այլ եւս Հիւանդանոցին մէջ մնալն անտեղութիւններ յառաջ կը բերէ. հարկ կ'ըլլայ զայն ճամբել:

Յօդ. 59. — Հիւանդին արձակման օրը միայն իրեն կը յանձնուին իր զգեստներն ու գոյքերը:

Դ. ՊԱՇՏՏՈՒՆՆԵՐԻ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

Յօդ. 60. — Հիւանդանոցի պաշտօնէութիւնը կը բաղկանայ տեսչէն, բժշկական մարմինէն, հսկող մայրապետներէ, վիրադարմաններէ, հիւանդասրահներէ, մատակարարէ, սըննդոց բաշխիչէ, լողարանի պաշտօնեայէ, սափրիչէ և դռնապաններէ, որոց երեք առաջիններն Հոգարարձութեանէ

կ'ընտրուին և անոր ու Տնօրէնութեան պատասխանատու են, իսկ մնացեալները անօրէնէն կ'ընտրուին՝ Հոգարարձութեան հաւանութեամբ և անոր պատասխանատու են:

1. Տ Ե Ս Ո Ւ Չ

Յօդ. 61. — Հիւանդանոցի տեսուչ կը համարուի նաեւ ներքին հիւանդութեանց բաժնոյն բժշկապետն, որոյ փոխանորդներն են, իր կողմանէ կարգեալ երկու հսկող մայրապետները, մին աշանց կողմն եւ միւսն կանանց:

Յօդ. 62. — Հոգարարձութիւնն եթէ արժան համարի, մասնաւոր տեսուչ մը կը կարգէ Հիւանդանոցին:

Յօդ. 63. — Հիւանդանոցի տեսչին կամ անոր փոխանորդին պաշտօնն է Հիւանդանոցի պաշտօնէից՝ ըստ կանոնագրութեանս տրամադրութեանց՝ իրենց պաշտօնն կատարելուն վրայ հսկել ու Հոգարարձութեանէն և Տնօրէնութեանէն ընդունուած հրահանգներն անոնց հաղորդել:

2. Բ Ժ Շ Կ Ա Կ Ա Ն Մ Ա Ր Մ Ի Ն

Յօդ. 64. — Բժշկական մարմինը կը բաղկանայ երկու բժշկապետէ՝ մին ներքին հիւանդութեանց եւ միւսն արտաքին հիւանդութեանց, որոց խրաքանչիւրն ունի իր օժանդակը:

Յօդ. 65. — Հիւանդանոցի մէջ պաշտօն վարելու կոչուած ամէն բժիշկ՝ Բժշկական վարժարանէ մը վկայեալ և Օսմ. կաւարութեան մէջ բժշկութիւն ընելու արտօնեալ ըլլալու է:

Յօդ. 66. — Հոգարարձութիւնն իր բժիշկ անդամոց հետ համախորհուրդ կ'ընտրէ Հաստատութեան բժիշկները:

Յօդ. 67. — Հիւանդներու բժշկական այցելութիւնք կը կատարուին ամէն օր՝ միջօրէէն առաջ, և կը սկսին ժամը զոնէ 9ին: Շարաթն երեք անգամ (օր ընդ մէջ) կ'այցելեն երկու բժշկապետները (ներքին և արտաքին հիւանդու-

թեանց) ընկերակցութեամբ իրենց օժանդակաց, իսկ առաջիններու բացակայ դանուած օրերը օժանդակ բժիշկները պարտին կանոնական այցելութիւն կատարել: Այս այցելութեանց միջոցին բժիշկներուն պարտին ընկերանալ իրենց բաժնի վիրադարմանը, հիւանդապահները, հսկող մայրապետն, ինչպէս նաև զեղադործը:

Յօդ. 68. — Այցելու բժիշկները պարտին առնուազն 3 ժամ մնալ Հիւանդանոցին մէջ:

Յօդ. 69. — Այցելու բժիշկներու անկ է իրենց դարմանած հիւանդներու ախտին անունը, տրուած զեղերը, սնունդն ու հիւանդին վաղեմի հիւանդութեանց ու ներկայ տկարութեան պատմութիւնը համաուօտակի դրել տալ՝ իրենց օժանդակաց միջոցաւ՝ հիւանդաթերթին վրայ, և հսկել ջերմոտ հիւանդներուն ջերմութեան չափերուն՝ առ այս յատկացեալ մասնաւոր թղթերու վրայ նշանակուելուն:

Յօդ. 70. — Ի հարկին Հիւանդարանի մի բաժնոյն պետը կրնայ իր միւս բաժնի ընկերոջ խորհրդածութիւնը խնդրել իր մի հիւանդին համար, և կամ գործողութեան մը համար անոր աջակցութեան դիմել:

Յօդ. 71. — Հիւանդանոցի բժշկապետք՝ երբ պէտք զգան դրան բժիշկի մը խորհրդակցութեան կամ գործողութեան մ'աջակցութեան՝ այդ խորհրդատու բժիշկը կ'ընտրուի հիւանդի պաշտպանաց, իսկ եթէ անոք է՝ Հոգարարձութեան կողմանէ: Դրանք եկող բժիշկի այցելագիրը՝ կարողներու համար հիւանդին կամ պաշտպանին կողմէ կը վճարուի, իսկ աղքատաց համար Հոգարարձութեան սնտուկէն: Սակայն եթէ հիւանդին կամ իր պաշտպանաց կողմանէ պահանջուի խորհրդակցութիւն մը՝ հրաւիրուած բժիշկի մը մասնակցութեամբ՝ այդ խորհրդակցութիւնը կրնայ տեղի ունենալ հիւանդին կամ պաշտպանին ծախիւք, կանոնաւոր այցադին վճարելով անոր և Հիւանդանոցի բժիշկին:

Յօդ. 72. — Բժշկապետներն իրենց բաժնոյն մէջ տեղի ունեցած թերութեանց մասին պատասխանատու են Տնօրէնութեան և Հոգարարձութեան:



1143-81

Յօդ. 73. — Հաստատութեան այցելու բժիշկները շաբաթը մի անգամ միայն իրենց օժանդակներու աջակցութեամբ դրսէն եկող հիւանդները կը քննեն և դեղագիր կուտան :

Յօդ. 74. — Բժշկապետք պարտին իրենց բաժնոյն տարեկան հաշուեհամար տեղեկագիր մը մատուցանել Հոգարարձութեան՝ զոր Հոգարարձութիւնը հրատարակութեան կը յանձնէ իր տարեկան տեղեկագրի միջոցաւ :

Յօդ. 75. — Օժանդակ բժիշկները պարտին նոր եկող հիւանդաց քննութիւնը կատարել ու վիճակը նօթագրել ի դիւրութիւն բժշկապետի քննութեան :

Յօդ. 76. — Օժանդակ բժիշկներն ամէն օր կ'այցելեն Հիւանդանոցը մինչ ցիկէս օր. միշտ անոնցմէ մին կը սպասէ յետ միջօրէին եւ դիշերն : Յիմարանոցի օժանդակ բժիշկն ալ կը մասնակցի այս դիշերային ծառայութեան, որով իւրաքանչիւր օժանդակ բժիշկ երեք օրն անգամ մը Հիւանդանոց մնալու պարտաւոր կ'ըլլայ :

Յօդ. 77. — Եթէ օժանդակ բժշկաց մին որ եւ է օրինաւոր պատճառաւ ուշանայ կամ բացակայ գտնուի, որոշեալ ժամուն միւս ընկերը պարտի բացակային դործերը առժամաբար ստանձնել. իսկ երբ ընկերը երկար ժամանակ բացակայ գտնուելու պարտաւորի՝ Տնօրէնութեան միջոցաւ դրսէն բժիշկ մը կը բերուի առժամանակեայ կերպով, որոյ կը վճարուի օժանդակ բժշկի ամսականը :

Յօդ. 78. — Սպասող օժանդակ բժիշկը պարտի երեկոյեան այցելութիւն մ'ընել ընդհանուր հիւանդաց սրահներուն :

Յօդ. 79. — Հիւանդի մը երբ հոգեվարք վիճակի հասած ըլլալն հաստատէ օժանդակ բժիշկը՝ պարտի հսկող մայրապետներուն միջոցաւ Տնօրէնութեան լուր տալ, որ պարտի հիւանդին ընտանեաց կամ պաշտպանին ծանուցանել և ըսել Հաստատութեան երէցին որ կատարէ հոգեւարքին կրօնական վերջին պարտականութիւնները :

Յօդ. 80. — Հիւանդաց պէտք եղած դեղօրայք եւ ուտեստք միայն Հիւանդանոցի բժշկապետաց կողմանէ կը տը-

նօրինուին, անոնցմէ դատ ոչ ոք կրայ որ եւ է պատճառաւ սոյն տնօրինութիւնը փոխել կամ արգելուլ, բաց ի սպասող բժշկէն, որ ի հարկին կարող է պարագային պահանջած փոփոխութիւններն ընել :

Յօդ. 81. — Օժանդակ բժիշկներն իրենց բաժնոյն հիւանդաց մասից եւ ելից արձանագրութիւնները կ'ընեն մասնաւոր տետրակայ մէջ : Այս արձանագրութիւններէն կը քաղեն բժշկապետք իրենց տարեկան տեղեկագրի նիւթերը :

Յօդ. 82. — Վերարուժական կարեւոր դործողութեանց առթիւ վերարուժապետը պարտի կանխաւ ծանուցանել ներքին հիւանդութեանց և Յիմարանոցի օժանդակ բժշկաց որպէսզի պատրաստուին աջակցիլ դործողութեան՝ որոշեալ ժամուն :

Յօդ. 83. — Թէ՛ այցելու եւ թէ՛ մնայուն բժիշկք պարտին իրենց ժամանման եւ մեկնելուն ժամերը ներկայութեան տումարին մէջ գրել եւ ստորագրել :

Յօդ. 84. — Առանց բանաւոր պատճառի բժշկաց բացակայութեան համար իրենց ամսականին համեմատական զեղչ կ'ըլլուի. եթէ բացակայութիւնները ստէպ կրկնուին և երկար տեւեն՝ պաշտօնէ կը դադարին :

Յօդ. 85. — Հաստատութեան մէջ տեղի ունեցած ծընդաբերութեանց համար բժիշկք պարտին մանկան մասին մասնաւոր տեղեկագիր մը տալ, զոր Տնօրէնութիւնը կը յղէ Հոգարարձութեան, կանոնական ձեւակերպութեանց կատարման համար :

Յօդ. 86. — Հաստատութեան մէջ պատուաստը պարտաւորիչ է, բժշկական մարմինը պարտի պատուաստել Որբանոցի տղաքները, ուսանող պատանիներն եւ այլ պատըստ պարեալ մանուկներն. ի հարկին եւ կրկնապատուաստ ընելու են պատասպարելոց :

Յօդ. 87. — Բժշկական մարմնոյն կողմանէ դիւղնութիւնը ներելի է այն ամէն մեռելոց՝ որոց ընտանիքն և պաշտպանք առ այս որ եւ է արդելք չեն յարուցաներ. եւ կամ երբ կը պահանջուի կառավարութեան եւ Աղդ. իշխանութեան կողմանէ մահուան պատճառը լուսարանելու համար :

3. ՀՍԿՈՂ, ՄԱՅՐԱՊԵՏՔ ՀԻՒԱՆԴԱՆՈՅԻ

Յօդ. 88. — Հիւանդանոցի հսկողութիւնը մայրապետաց յանձնուած է, յորոց երկուքն արանց եւ երկուքը կանանց բաժնին մէջ կը գտնուին. իւրաքանչիւր բաժնի մայրապետաց մին՝ ներքին հիւանդութեանց սրահներուն հսկողն է, միւսն արտաքին բաժնի սրահներուն: Իւրաքանչիւր բաժնի մայրապետաց մին՝ այն բաժնի ընդհանուր հսկողն է եւ ի բացակայութեան ներքին հիւանդութեանց բժշկապետին՝ անոր փոխանորդն՝ իբր փոխ-տեսուչ (Յօդ. 61):

Յօդ. 89. — Մայրապետները պարտին բժշկաց հրամաններուն եւ կանոնադրիս տրամադրութեանց գործադրութեան խնամք տանիլ: Հիւանդանոցի պաշտօնէից իրենց ծառայութեանց բարուք գործադրութեան, սրահներու կարգաւորութեան եւ մաքրութեան հսկել, Հիւանդանոցի անուղղայ պաշտօնեաներն եւ անհնազանդ հիւանդները մատնացոյց ընել բժշկապետաց:

4. Վ Ի Ր Ա Դ Ա Ր Մ Ա Ն Ք

Յօդ. 90. — Արանց հիւանդանոցի իւրաքանչիւր բաժինն ունի երկու վիրադարման, իսկ կանանցը մէկ: Վիրադարմանաց պարտականութիւնն է իրենց յանձնուած գործիքներն ու վիրադարմանի խուցերը մաքուր պահել, հիւանդաց վէրքերը պատել եւ այլ վիրաբուժական փոքր ծառայութիւններ կատարել, խարան բանալ, գրեխ ընել, տղրուկ փակցընել, մարձ ընել, գոնջերը դարմանել եւ այլ այս կարգի խնամարկութեանց ծառայել, միշտ ըստ բժշկապետաց հրամանին եւ հրահանգաց:

Յօդ. 91. — Արտաքին բաժնոյն վիրադարմանը պարտի նաեւ վիրաբուժական սրահի մաքրութեան հոգն ունենալ, իսկ ներքին բաժնոյն վիրադարմանը պարտի եւ Որբանոց այցելել ու բժշկաց հրահանգի համաձայն՝ անդ գտնուող սոքի վրայ հիւանդներուն պէտք եղած ծառայութիւնն ընել:

Յօդ. 92. — Վիրադարմանք մնայուն են, շաբաթն մէկ

անգամ ստիպյն կրնան բացակայիլ անօրէնին գիտակցութեամբ. բացակայութեան պահուն՝ իրենց միւս ընկերը պարտի անոր պաշտօնը կատարել:

5. Հ Ի Ի Ա Ն Դ Ա Պ Ա Հ Ք

Յօդ. 93. — Հիւանդապահք 20-35 տարեկան, եւ իրենց բարի վարուց համար վիպեալ եւ քաջաուղջ պարտին ըլլալ: Բժշկաց հաւանութեամբ եւ Տնօրէնութեան ընտրութեամբ պաշտօնի կը կոչուին: Սոյն ընտրութեան մէջ փոքր ի շատէ գրել կարդալ գիտցողներուն եւ հիւանդապահութեան վարժութիւն ունեցողներուն առաջնութիւն կը տրուի:

Յօդ. 94. — Հիւանդարանի ամէն սրահ ունենալու է 15-20 հիւանդի համար մէկ հիւանդապահ: Մասաւոր սենեակները մէկ հիւանդապահ ունենալու են:

Յօդ. 95. — Հիւանդապահից պարտականութիւնն է իրենց սրահներն ու յարակից մասերը մաքուր պահել (Յօդ. 35, 37), սրահից օդը սակալ փոխել, սրահից ջերմութեան աստիճանին հսկել (Յօդ. 34), հիւանդաց ու անոնց անկողնոց մաքրութեան խնամք տանիլ, սկար եւ անկարող հիւանդաց երեսն ու ձեռքերը լուալ, դեղերն ու սնունդը տալ, օգնել անոնց ամէն կերպով. հիւանդապահք իրենց հիւանդաց լողանաց օգնելու պարտական են:

Յօդ. 96. — Սրահի մը հիւանդապահք պարտին բժշկական այցելութեան հետեւիլ, ու բժշկին ուզած ակզեկութիւնները տալ եւ անոց պատուէրները լսել:

Յօդ. 97. — Հիւանդապահք պարտին իրենց հիւանդներուն հետ քաղցրութեամբ եւ համբերատար սղտով վարուիլ, սրահներու մէջ բարձրաձայն չխօսիլ եւ չծիտիլ, հիւանդներէ կամ անոնց այցելողներէ ստակ չպահանջել ո եւ է պատուակալ:

Յօդ. 98. — Հիւանդապահք պարտին ամէն օր իրենց սրահի մէջ փոխն ի փոխ սպասել դիշեր եւ ցորեկ, այնպէս որ վայրկեան մ'իսկ հիւանդները առանձին չթողուն: Սուտի

հիւանդապահ մը սրահի մը մէջ պահնորդ եղած միջոցին՝ երբ յանկարծ հիւանդ մը բժշկին անմիջական ներկայութեան կարօտի, հիւանդապահը առանց սրահէն բաժնուելու՝ իր ընկերներէն միոյն միջոցաւ սպասող օժանդակ բժշկին ազդարարել կուտայ :

Յօդ. 99. — Հիւանդապահը 15 օրն անգամ մը միայն կրնան 24 ժամ բացակայիլ Տնօրէնութեան գիտակցութեամբ, յորժամ իրենց ընկերը պարտի անոր պաշտօնը կատարել :

Յօդ. 100. — Հիւանդանոցն ունի եւ մի գիշերապահ, որ գիշերները կը հսկէ հիւանդաց վրայ ու ի հարկին կ'արթնցնէ հիւանդապահը, որպէս զի խնամէ իր հիւանդն և կամ դիմէ բժշկի օգնութեան :

Յօդ. 101. — Գիշերապահն ալ 15 օրը միանգամ 24 ժամ կրնայ բացակայիլ՝ իրեն փոխանորդ կարգելով հիւանդապահներէ մին և կարգաւ :

6. ՄԱՏԱԿԱՐԱՐ, ՄՆՆԴՈՅ ԲԱՇԽԻՉՔ, ԼՈԳԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԵԱՅ, ՍԱՓՐԻՉ ԵՒ ԴՌՆԱՊԱՆ

Յօդ. 102. — Մատակարարի պաշտօնն է համայն հիւանդաց հիւանդաթերթերն աչքէ անցընել և բժշկաց կողմանէ պատուիրեալ սննդոց ցուցակը պատրաստել ու դայն խոհանոց յղել, որպէս զի ըստ այնմ պատրաստուի սնունդը. մատակարարը ներկայ կը գտնուի սննդոց բաշխման և բժշկաց այցելութեանց :

Յօդ. 103. — Սննդոց բաշխիչ պաշտօնեայք երկուք են, մին արանց համար եւ միւսն կանանց, որք խոհարանի պաշտօնէից աջակցութեամբ խոհարանէն կ'ընդունին Հիւանդարանի յատուկ սնունդները, զայնս մասնաւոր սայլակներու միջոցաւ կը բաշխեն հիւանդաց՝ հսկող մայրապետին հսկողութեամբ, մատակարարի եւ հիւանդապահաց օժանդակութեամբ. միեւնոյն պաշտօնեայք կը լուան եւ սեղանի սպասները :

Յօդ. 104. — Լոգանաց պաշտօնեայն կ'ընէ հիւանդաց

մաքրական եւ ջրաբուժական լոգանքներն : Այս պաշտօնեայքն զատ ուրիշ մ'ալ կայ որ կանանց կողմի լոգանքները կը կատարէ եւ որ հիւանդապահներէն մէկը կ'ըլլայ միշտ :

Յօդ. 105. — Հաստատութիւնս ունի մի մնայուն սափրիչ, որ կ'ածիլէ հիւանդներն ու ի հարկին կը կտրէ անոնց մազերը :

Յօդ. 106. — Արանց եւ կանանց Հիւանդանոցներն ունին մասնաւոր դռնապաններ, որք Հիւանդարանի պաշտօնեաներէն զատ՝ Տնօրէնութենէն հրաման չառնող ոչ ոք ընդունելու են Հիւանդանոցի մէջ : Հսկելու են որ այցելուներն իրենց հիւանդաց համար դրսէն որ եւ է սնունդ չբերեն՝ առանց բժշկաց թոյլտուութեան : Պարտէզ կրնան իջնել միայն այն հիւանդներն՝ որք իրենց բժիշկներէն արտօնեալ են :

Դռնապանները դրան յարակից մասանց մաքրութեան հոգ տանելու են :

2. ՅԻՄԱՐԱՆՈՅ Ա. ՅԻՄԱՐԱՍՐԱՉՔ

Յօդ. 107. — Յիմարանոցն ունի 4 գլխաւոր բաժանում. Ա. Հանգարս եւ աւիսասաւոր հիւանդներ. — Ասոնք երկու դասի կը բաժնուին, անդամանելիներ՝ որք որ եւ է դարմանի ենթակայ չեն, և դարմանի ենթակա են. ասոնք խառն են եւ կը կատարեն Հաստատութեան աշխատութիւններն եւ իրենց յատուկ աշխատանոցին մէջ արհեստներն ի դործ կը դնեն :

Բ. Յուզեալ. — Ասոնք ալ երկուքի կը բաժնուին. բուն յուզեալներն եւ կես մը յուզեալներն, որք խառն կրնան մնալ՝ յուզմանց պահերնուն մասնաւոր խցիկներու մէջ դըրուելու և կամ բռնազգեստ (camisole de force) եւ ձեռնակալ (manchon) հագցուելու պայմանաւ :

Գ. Շոաններ (galleux) :

Դ. Տղայի :

Յօղ . 108 . — Հիւանդ յիմարները Հիւանդանոցի մի մասնաւոր սրահին մէջ կը դարմանուին (Յօղ . 26) Հիւանդանոցի բժշկաց կողմանէ ; որոց կը գործակցին Յիմարանոցի բժիշկները :

Յօղ . 109 . — Յիմարաց ննջարաններն անշատ են իրենց սրահներէն , եւ յիմարք միայն երեկոյեան հանգստի ժամուն կ'երթան իրենց ննջարաններն ու առաւօտը՝ արշալոյսին դուրս կ'ելլեն անոնցմէ :

Յօղ . 110 . — Յիմարանոցի սրահներու եւ ննջարանաց պատուհանները բարձրէն բացուած եւ երկաթէ ամուր վանդակով գոցուած ըլլալու են :

Յօղ . 111 . — Յուզեալ յիմարաց ննջարաններու կանթեղները պէտք է դրուին պատին մէջ , բարձր տեղ մը բացուած խորշերու մէջ , որոնք վանդակափեղկով գոց կը պահուին :

Յօղ . 112 . — Զմեռուան վառարաններն երկաթէ հաստատուն վանդակներով պատեալ ըլլալու են :

Յօղ . 113 . — Ճէմիչներու պատուհանները բարձրէն բացուած եւ երկաթէ վանդակով գոցուած ըլլալու են . նոյնպէս կոնքերը կափոյրով գոց ըլլալու են :

Յօղ . 114 . — Յիմարաց սրահները , ննջարաններն ու ճաշարաններն ամէն օր կ'աւրտին ու կը մաքրուին յիմարապահաց կողմանէ . պէտք է նաեւ փոխել բոլոր յարկերու օղն եւ մաքրել ճեմիչները :

Յօղ . 115 . — Սրահներու , ննջարանի եւ այլ մասանց պատերը տարին գոնէ երեք անգամ բուռելու է :

Յօղ . 116 . — Սրահներու ջերմութիւնը ձմեռ աստն ըլլալու է գոնէ 16° եւ երբեք 20°էն աւելի :

Յօղ . 117 . — Ննջարանը , ճեմիչներն ու սանդուխները գիշերները լուսաւորուած ըլլալու են :

Յօղ . 118 . — Յիմարք իրենց արամադրութեան տակ ունին յողարան , ուր բժշկին հրամանաւ լողանքներ կ'ընեն . ունին նաեւ խօսարան մը՝ ուր կ'ընդունին իրենց այցելուները :

Բ. ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆ ՅԻՄԱՐԱՅ

Յօղ . 119 . — Որ եւ է անձ Յիմարանոցի մէջ իբր յիմար ընդունուելու համար՝ հարկ է կանխաւ Հաստատութեան Հոգաբարձութեան յղել այդ անձին յիմարութիւնը հաստատող առ առաւելն 15 օրուան բժշկական մանրամասն վրկայագիրը , վաւերացեալ Հաստատութեան յիմարաբուժին կողմանէ , եւ առ Հոգաբարձութիւնն ուղղեալ խնդրագիր մը՝ ստորագրեալ յիմարը փակել ուղղ ա՛նձանց կողմանէ , որոց ստորագրութիւնը Թաղաւիան Խորհրդոյ կողմանէ վաւերացեալ ըլլայ : Այս դիմումներու վրայ Հոգաբարձութեանէն արբուած արտօնագրով մը կը դիմուի Հաստատութեան Տնօրէնութեան :

Յօղ . 120 . — Իսկ ստիպողական պարագայից մէջ , ինչպէս դաւառներէ կամ կառավարութեան կողմանէ զրկուած յիմարներուն , յիմարաբուժին վկայագիրը բաւական կը համարուի , օրինական գործողութիւնները անօրէնին կողմանէ կատարուելու պայմանաւ :

Յօղ . 121 . — Յիմարաց ընդունելութեան աստեն՝ անոնց անունը , բնակութեան տեղը , արհեստը եւ ընկերական վիճակը յատուկ տօմարի մը մէջ կ'արձանագրուին եւ անոր պաշտօնական թղթերը Տնօրէնութեան քով պահ կը մնան մինչ նորա արձակումը :

Յօղ . 122 . — Յիմարք ըստ իրենց կարողութեան կը վճարեն տնօրեայ 1-5 ոսկի . 3-5 ոսկի վճարողները մասնաւոր սենեակ կրնան ունենալ : Անկարողները ճրի կ'ընդունուին :

Յօղ . 123 . — Յիմարաց ամուսկանները կանխիկ կը վճարուին եթէ պաշտպանք չվճարեն՝ Տնօրէնութիւնն երկիցս աղղարարութիւն ընելէ վերջ յիմարն ետ կը զրկուի :

Յօղ . 124 . — Յիմարներն ընդունուելուն՝ իրենց աւանդները Տնօրէնութեան կը յանձնուին , լողանք կ'ընեն , իրենց զգեստները մասնաւոր պարկերու մէջ ի պահ կը դրը-

ուին հիւանդաց նման, եւ Հաստատութեան համադրեստը կը կրեն:

Յօդ. 125. — Նորեկ յիմարը մինչև որ Հաստատութեան բժշկին կողմանէ չքննուի՝ յիմարանոց չլրկուիր:

Գ. Յ Ի Մ Ա Ր Ք

Յօդ. 126. — Յիմարք ամէն օր բժշկական այցելութիւն կ'ընդունին:

Յօդ. 127. — Յիմարներէ անոնք որք անվրաս են՝ ըստ բժշկի հրահանգաց՝ աշխատութեամբ կը պարապին, պարտէզները կը շրջագային, երբեմն մօտակայ տեղեր պտոյտներ կ'ընեն իրենց պետերուն հսկողութեան տակ: Յուզեալներն ու վրասակարները փակեալ կը մնան:

Յօդ. 128. — Ննջարաններու մէջ ծխելն արգիլեալ է:

Յօդ. 129. — Յիմարները հիւանդաց նման օրն երեք անգամ սնունդ կ'ընդունին, եւ իրենց ճաշասրահներու մէջ պատուաքաղ կը տրուի միայն անոնց՝ որոնց մասին բժշկին արտօնած է:

Յօդ. 130. — Մնունդնին կը բաշխուի խոհարանի պաշտօնէից կողմանէ եւ իրենց յիմարապահներու հսկողութեան տակ:

Յօդ. 131. — Յիմարաց անկողնոյ սաւանները 15 օրն անգամ մը կը փոխուին, իսկ ճերմակեղէնները շաբաթն անգամ մը սակայն ի հարկին ճերմակեղէն թէ սաւան աւելի ստէպ փոխուելու են:

Յօդ. 132. — Յիմարները տարին երկու ձեռք զգեստ կ'ունենան, ամիսն անգամ մը բաղնիք կ'երթան, եւ 15 օրն անգամ մը կ'աձիլուին ու մազերնին կը կտրուի, միշտ յիմարապահաց հսկողութեան տակ:

Յօդ. 133. — Երբ հիւանդ մը ըստ բաւականի բարուքուած ու սպաքինած ըլլալով՝ արձակուելու յարմար դատ-

ուի յիմարարոյժ բժշկին կողմանէ՝ Տնօրէնութեան միջոցաւ՝ լուր կը տրուի դայն փակել տուող անձին:

Յօդ. 134. — Իսկ եթէ տակաւին չի բուժուած յիմարի մ'արձակումն պահանջուի, պէտք է անոր Յիմարանոց ընդունուելու խնդրագիրը ստորագրող անձինք՝ իրենց ստորագրութեամբ եւ տեղւոյն Թաղական Խորհրդէն վաւերացեալ գրութեամբ մը նորա արձակումն խնդրեն: Այսու ամենայնիւ եթէ յիմարարոյժը վտանգաւոր դատէ յիմարին ազատ արձակումը՝ պարտի դայն ծանուցանել յիմարի տէրերուն եւ Հոգաբարձութեան: Սակայն եթէ յիմարին պաշտպանները պնդեն՝ յիմարարոյժը Տնօրէնութեան միջոցաւ անոնցմէ ստորագրեալ թուղթ մը կը պահանջէ, որով պարտին խոստովանիլ թէ յիմարարոյժն ըսած է իրենց՝ յիմարնուն արձակման վտանգները՝ սակայն իրենք ուղած են անպատճառ դայն իրենց քով ունենալ, եւն՝ և այդ թղթի փոխարէն միայն կը յանձնուի իրենց պաշտպանեալը:

Յօդ. 135. — Առանց յիմարաբուժին գիտութեան՝ որ եւ է յիմար չկրնար արձակուիլ:

Դ. Պ Ա Շ Տ Օ Ն Է Ո Ի Թ Ի Ի Ն. Յ Ի Մ Ա Ր Ա Ն Ո Յ Ի

Յօդ. 136. — Յիմարանոցի պաշտօնէութիւնը կը բաղկանայ բժշկական մարմնէն եւ յիմարապահներէ: Յիմարաբուժապետն Յիմարանոցի տեսուչը կը համարուի:

1. Բ Ժ Շ Կ Ա Կ Ա Ն Մ Ա Ր Մ Ի Ն

Յօդ. — 137. — Յիմարանոցի բժշկական մարմինը կը բաղկանայ մէկ բժշկապետէ եւ մէկ կամ աւելի օժանդակներէ (ըստ յիմարաց թուոյն), որք Հիւանդանոցի բժշկաց նման կ'ընտրուին (Յօդ. 63) և ունենալու են անոնց յատկութիւններն (Յօդ. 65), եւ տեղեակ ըլլալու են յիմարաբուժութեան:

Յօդ . 138 . — Յիմարաբուժը շաբաթն երկու անգամ կ'այցելէ եւ կը մնայ գոնէ 3 ժամ, խակ իր օժանդակին ամէն օր մինչ սկիստ օր, եւ երեք օրն անգամ մը՝ դիչերն ալ Հաստատութեանս մէջ կ'անցընէ (Յօդ . 76) :

Յօդ . 139 . — Յիմարաբուժը իր օժանդակի, յիմարապահաց պետի ու երկու յիմարապահի ընկերակցութեամբ կ'ընէ իր այցելութիւնն եւ կը սահմանէ տրուելիք դեղերն եւ գործադրուելիք միջոցները : Յիմարաբուժապետի չեկած օրերն իւր օժանդակը կը կատարէ այցելութիւնը միշտ երկու յիմարապահի եւ անոնց պետի ընկերակցութեամբ :

Յօդ . 140 . — Յիմարաբուժը պարտի մասնաւոր տօմար մը բռնել, ուր կը նշանակէ ըստ մայր տօմարի յիմարաց թիւը, անունը, մականունը, արհեստը, տարիքը, հայրենիքը, ուստի գալը եւ ընդունելութեան թուականը :

Յիմարաբուժը պարտի նաեւ յիմարաց իւրաքանչիւրի հիւանդաթիւերէն վրայ՝ նշանակել անոր հիւանդութեան տեսակը, ախտին մանրամասն պարագաները, գործադրելի դարմանները եւ պարբերաբար հիւանդին մտաւորական վիճակին վրայ հակիրճ ու բացայայտ տեղեկութիւն մը, եւ հուսկ ապա հիւանդութեան վախճանը :

Յօդ . 141 . — Յիմարանոցի բժիշկը պարտի պարբերաբար եւ կամ ի պահանջման տեղեկագրեր յղել ի մասին այն ամէն յիմարաց՝ որոց պաշտպանները Հաստատութեան գումար մը կը վճարեն այդ տեղեկագրերու համար :

Յօդ . 142 . — Յիմարաբուժը պարտի՝ նման Հիւանդանոցի բժշկաց՝ տարեկան տեղեկագիր մը մատուցանել Հոգաբարձութեան, իրեն խնամոց յանձնեալ յարկերու եւ անոնց մէջ պատասխարելոց մասին :

Յօդ . 143 . — Եթէ Յիմարանոցի օժանդակ բժիշկն որ եւ է պատճառաւ բացակայ գտնուի՝ Հիւանդանոցի օժանդակ բժիշկներէն մին անոր պաշտօնը կը կատարէ՝ գիտակցութեամբ յիմարաբուժի եւ Տնօրէնութեան :

Յօդ . 144 . — Եթէ յիմարի մը տէրը ուղէ գրտէն բժշկի մը խորհրդակցութիւնը՝ կարելի է այդ . սակայն պարտի

կանոնաւոր այցագին վճարել թէ՛ այցելու բժշկին եւ թէ՛ Հաստատութեան յիմարաբուժին :

Յօդ . 145 . — Հիւանդանոցի բժշկաց բաժնոյն մէջ Յօդ . 72 , 74 , 75 , 76 , 77 եւ 78ի տրամադրութիւնք նոյն են եւ Յիմարանոցի բժշկաց համար :

Յօդ . 146 . — Յիմարաց վրայ տեղի ունենալիք վիրաբուժական գործողութիւնք կը կատարուին Յիմարանոցի բժշկաց օժանդակութեամբ, Հաստատութեան վիրաբուժին կողմանէ :

2. Յ Ի Մ Ա Ր Ա Պ Ա Հ Ք

Յօդ . 147 . — Յիմարապահք պարտին ունենալ հիւանդապահաց յատկութիւններն եւ ընտրուած ըլլալու են միևնոյն եղանակաւ (Յօդ . 93) :

Յօդ . 148 . — Տասնեւհինգ յիմարաց մէկ յիմարապահ հարկ է . հարկ է նաեւ մի յիմարապահաց պետ իւրաքանչիւր բաժնի (արանց եւ կանանց) համար :

Յօդ . 149 . — Յիմարապահաց պարտականութիւնն է իրենց սրահներն ու յարակից մասերը մաքուր պահել, յիմարաց մաքրութեան խնամք տանիլ, ի հարկին անոնց ձեռքերն ու երեսները լուալ, դեղերն ու անոնդները տալ եւ սեղանի սպասները մաքրել :

Յօդ . 150 . — Յիմարապահք պարտին միշտ քաղցրութեամբ վարուիլ յիմարներու հետ, երբեք զանոնք չնեղել, չծեծել, եւ առանց բժշկի հրամանին չբանտարկել, բռնապետ հազցնել կամ ջրցան ընել :

Յօդ . 151 . — Յիմարները միշտ ընդ հսկողութեամբ յիմարապահաց են :

Յօդ . 152 . — Յիմարապահք գիշերը կարգաւ հսկողութիւն կ'ընեն յիմարաց վրայ :

Յօդ . 153 . — Յիմարապահք 15 օրն անգամ մը Տնօրէնութեան գիտակցութեամբ կրնան բացակայիլ . այդ միջո-

ցին իրենց ընկերները պարտին ստանձնել բացակայողի պաշտօնը :

Յօլ . 154 . — Յիմարապահներու տարին երկու ձեռք զգեստ կը շինուի : Նոյեմբերին և Համբարձման օտոնին : Յիմարապահը Հաստատութեան համազգեստը կրելու պարտաւորեալ են :

3. Ծ Ս Բ Ս Ն Ո Յ Ս Ի Ա Ն Կ Ս Լ Ա Ն Ո Ց

Յօլ . 155 . — Ծերանոցն յատկացեալ է վկայեալ անտէր և անօգնական ծեր աղգայնոց՝ ուր կ'անցընեն իրենց կենաց վերջին օրերը : Իսկ Անկեղանոցը կարօտ , անտէր , անդամաւոյժ և աշխատելու անկարող որ և է հասակի անձանց և փորձանաւոր աղջկանց ու լքեալ կանանց յատկացեալ յարկ մըն է :

Ծերանոց և Անկեղանոց կրնան ընդունուիլ նաեւ ամէն ծեր կամ անկեալ որ՝ անոք ըլլալով՝ իրենց ունեցած կալուածները կամ հարստութիւնը Հաստատութեան կը թողուն ի կենդանութեան , և հաւանութեամբ Հոգարարձութեան :

Յօլ . 156 . — Ծերերու և անկեալներու ընդունելութիւնը Հոգարարձութեան կողմանէ միայն կրնայ ըլլալ :

Յօլ . 157 . — Ծերերն ու անկեալներն երկու դասակարգի կը բաժնուին . անկողնոյ դատապարտեալներ՝ որք մասնաւոր սրահի մը մէջ կը գտնուին՝ և սօքի վրայ ծերեր՝ որք երեկոյները պառկելու համար իրենց ննջարանները կը մանեն ու առաւօտուն կ'ելնեն և ցերեկին իրենց խօսարանները կը հաւաքուին , և կամ Հաստատութեան պարտէզին մէջ ժուռ կուգան :

Յօլ . 158 . — Աշխատելու կարող անկեալները Հաստատութեան մէջ թեթեւ աշխատութեանց կը դորձածուին :

Յօլ . 159 . — Ծերունեաց և անկեալներու տրամադրու-

թեան տակ կը գտնուի իրենց բաժիններու մէջ հաստատեալ երկու մատենադարան , մին արանց կողմն և միւսը՝ կանանց :

Յօլ . 160 . — Անկողնոյ դատապարտեալք իրենց անկողնոյն մէջ կը ճաշեն , սակայն միւսներն իրենց ճաշարահներու մէջ ճաշելու են և ի միասին :

Յօլ . 161 . — Ծերունիներն և անկեալները շաբաթն անգամ մը կ'ընդունին ներքին բժշկապետի այցն և կը ստանան պէտք եղած դեղերն ու ի հարկին կ'ընդունուին Հիւանդանոց ի դարմանումն :

Յօլ . 162 . — Ծերանոցն ու Անկեղանոցն ունին արանց կողմն մի պետ , և կանանց կողմն մի հսկող մայրապետ , որք իրենց յանձնուած յարկերու բարելաւութեան մասին պատասխանատու են Տնօրէնութեան :

Յօլ . 163 . — Արանց կողման պետն իր տրամադրութեան տակ ունի երեք պաշտօնեայ , որոց մին սեղանապետ է և խնամ կը տանի այս պատասպարելոց սնունդը բաշխելու և հսկելու սեղանի սպասից և սեղանատան մաքրութեան . իսկ միւս երկուքը ծերապահներ են , և պատասպարելոց պէտքերը հոգալու և անոնց անձին , սրահներու , ննջարանեկաց և ձեմիշներուն մաքրութեան հոգը ստանձնելու յատկացուած են , կանանց բաժնի մայրապետն իր տրամադրութեան տակ երկու պաշտօնեայ ունի՝ մին սեղանապետ եւ միւսը ծերապահ :

Յօլ . 164 . — Ծերանոցն ու Անկեղանոցը գիշերները լուսաւորուած ըլլալու են :

Յօլ . 165 . — Ծերերն ու անկեալները Հաստատութեան կողմէ կ'ընդունին նաեւ ծխախոտ , և սուրճ պատրաստելու համար սուրճ ու շաքար : Ծարաթն իւրաքանչիւրին համար 50 կրամ ծխախոտ , 20 տրամ սուրճ և 20 տրամ շաքար կը տրուի :

Յօլ . 166 . — Ծերերն և անկեալներն ամիսն անգամ մը բաղնիք կ'երթան , սակայն ամէն անոնք՝ որ անկողնոյ դատապարտուած ըլլալով՝ բաղնիք երթալու անկարող են , ծերապահք պարտին դանոնք իրենց անկողնոյ մէջ օճառի տաք ջրով սրբել :

Յօդ. 167. — Ծերերն ու անկեալները օրը երեք անգամ սնունդ կ'ընդունին (Յօդ. 260, 261):

Յօդ. 178. — Ծերերն ու անկեալները բոլոր պատըսպարեցոց նման տարին երկու ձեռք զգեստ կ'ընդունին: Ծարաթն անգամ մը ճերմակեղէն և 15 օրն անգամ մը սաւան կը փոխեն և ի հարկին Հաստատութեան ստիբիչին կողմանէ կ'ածխուին ու մազերնին կը կտրուի:

4. ՈՒՍՍ. ՆՈՂ. Գ

Յօդ. 139. — Ուսանող կ'անուանեմք այն ամէն արական սեռէ որք և անպաշտպան պատանիներն՝ որք մի բարձրագոյն վարժարան կը յաճախեն և կամ մի արհեստի կը հետեւին (քաղաքին կամ Հաստատութեան մէջ) և երեկոյները կը պատասպարուին Հաստատութեան իրենց յատուկ յարկին մէջ:

Յօդ. 170. — Այս պատանիներն ընդհանրապէս Որբանոցի շրջանաւարաներ են, երբեմն ուսման անյարմար Որբանոցի տաներ և կամ դրոշն եկողներ. Հոգարարձութիւնը միայն կրնայ արտօնել ասոնց ընդունելութիւնը:

Յօդ. 171. — Յատուկ տեսուչ մը՝ հսկողն է Հաստատութեան այս ճիւղին և հոգ կը տանի ուսանողաց կրթութեան և բարոյականին, անոնց աշխատութեանց կանոնաւորութեան և ըստ կարի ուսումնական գրադմանց և ունի իր տրամադրութեան տակ մէկ պաշտօնեայ՝ որ ուսանող պատանեաց ննջատենեկի և ճաշարահի մաքրութեան խնամքը ունի:

Յօդ. 172. — Անհնազանդ և անուղղայ ուսանող պատանիները յարմար պատժոց կը դատասպարտուին մէկ օրէ մինչ մէկ շաբաթ. այս որոշումն՝ Տնօրէնութիւնն ու Հոգարարձութիւնը միայն կրնան տալ:

Յօդ. 173. — Քաղաքի արհեստաւորաց քով աշակերտող պատանիներն երբ սկսին գումար մը շահիլ՝ այդ գումարի

իրենց ծախուց բաւող մասը միայն իրենց կը տրուի և մնացեալն ի պահ կը դրուի Հաստատութեանն Տնօրէնութեան քով՝ ապագային անոնց դրամագլխի մաս կազմելու համար:

Յօդ. 174. — Հաստատութեան արհեստաւորաց քով աշխատող պատանիներն երբ բաւական վարժուին իրենց գործին մէջ՝ վարպետներնուն առաջարկին վրայ՝ շաբաթական մը կը յատկանայ Տնօրէնութեան կողմանէ, որոյ մի մասը միայն իրենց կը յանձնուի, իսկ մնացեալն ի պահ կը դրուի իրենց հաշուոյն:

Յօդ. 175. — Վարժարանաց հետեւող պատանիներն երբ շրջանաւարտ ըլլան՝ ու արհեստաւորներն երբ խալիֆայի ստիճանին հասնին, այլեւս պարտին հետանալ Հաստատութեանէն:

Յօդ. 176. — Ուսանող պատանեաց տարին երկու անգամ զգեստ կը շինուի: Անկողնոց սաւանները 15 օրն անգամ մը, իսկ ճերմակեղէնները շաբաթն անգամ մը կը փոխուին: Հաստատութեան ստիբիչն ամիսն անգամ մը մազերնին կը յարդարէ եւ ամիսը մի անգամ բաղնիք կ'երթան:

5. ՈՐԲԱՆՈՑ

Յօդ. 177. — Հաստատութեան Որբանոցը մի մասնաւոր Խնամակալութիւն ունի, ընտրեալ Հոգարարձութեան կողմէ, որուն պատասխանատու է, (Յօդ. 6, 8, 9) եւ տեսչի մը ձեռք կը վարէ զայն:

Յօդ. 178. — Որբանոցն երկուքի բաժնուած է, մանչերու եւ աղջկանց. առաջինը՝ տեսուչը ինք անձամբ կը վարէ, իսկ երկրորդը՝ աւագ ուսուցչուհուոյն միջոցաւ, որ իր փոխանորդը կը համարուի:

Յօդ. 179. — Աղջկանց Որբանոցի ձեռարուեստից վերին հսկողութիւնը Տիկնանց Խնամակալութեան անկ է (Յօդ. 7):

Յօդ. 180. — Որբանոցի ուսմանց ծրագիրն է Ուսումնական Խորհրդոյ տարրական նախակրթարանի ծրագիրը. մին-

չեւ միջին դասընթացքի լրումը. մանչերն ունին 6 դասարան եւ աղջկունք 4: Մանչերու վերջին երկու տարիներու մէջ երկրագործական դասընթացք մը կ'ուսանդուի շաբաթական երկու ժամ դասով:

Յօդ. 181. — Արանց Որբանոցի մէջ ուսանելի արհեստներն են, դերձակութիւն, կահագործութիւն, ոստայնանկութիւն, կօշկակարութիւն, հիւսնութիւն, երկաթագործութիւն. իսկ աղջկանց բաժնին մէջ ասեղնագործութիւն, գորգաշինութիւն, դերձակութիւն, ծաղիկշինութիւն: Այս արհեստից թիւը կրնայ աւելնալ կամ պակսիլ Հոգաբարձութեան որոշմամբ:

Յօդ. 182. — Որբանոցի տեսչի պաշտօնն է հսկել իրեն յանձնուած յարկի բարեկարգութեան եւ ներքին կանոնագրի գործադրութեան. ուսումնական եւ արհեստական խնդրոց մասին ինամակալութեան կը դիմէ, իսկ մատակարարական խնդրոց նկատմամբ՝ Տնօրէնութեան:

Յօդ. 183. — Որբանոցի տեսուչը ինամակալութեան հաւանութեամբ Հոգաբարձութենէն կ'ընտրուի, եւ պատասխանատու է Տնօրէնութեան, ինամակալութեան եւ Հոգաբարձութեան:

Յօդ. 184. — Որբանոցի տեսուչը իր գործառնութեանց օրագրութիւնը Հաստատութեան տնօրէնին միջոցաւ կը յղէ Հոգաբարձութեան:

Յօդ. 185. — Տեսուչը հրահանգ կուտայ ուսուցչաց, ինամակալութեան հրամանները կը հաղորդէ արհեստից վարպետներուն, կը հսկէ սննդոց եւ հանդերձեղինաց բարւոք մատակարարութեան ու աշակերտաց բարոյականին: Պաշտօնէից ամսականները՝ Տնօրէնութենէն ստանալով՝ կը վերձարէ անոնց:

Յօդ. 186. — Տեսուչը շաբաթն երկու անգամ միայն գիշերները կրնայ բացակայիլ Որբանոցէն՝ Տնօրէնութեան գիտակցութեամբ. իր բացակայութեան պահուն աւագ ուսուցիչներէ մին իրեն փոխանորդ կարգելով:

Յօդ. 187. — Ուսուցիչք պարտին վարժարանի ուսմանց

ծրագրին եւ տեսչի հրահանգաց համաձայն դաս տալ իրենց յանձնուած սանուց:

Յօդ. 188. — Արհեստից վարպետները ըստ ինամակալութեան հրահանգաց կը վարեն իրենց գործերը:

Յօդ. 189. — Ուսուցչական մարմինը կը բաղկանայ. Ա. դաստիարակ-ուսուցիչներէ՝ որոց թիւը դասարաններու թւոյն կը համապատասխանէ եւ մնայուն են միշտ, եւ Բ. Այցելու ուսուցիչներէ:

Յօդ. 190. — Արհեստից իւրաքանչիւր ճիւղն ունի մանչերու կողմը մի վարպետ եւ ի հարկին օգնական մը, իսկ աղջկանց կողմը ձեռարուեստի վարժուհի մը, որ քանի մը ճիւղեր կրնայ ուսուցանել:

Յօդ. 191. — Արհեստաւոր վարպետները ցերեկեայ են. աղջկանց Որբանոցի ձեռարուեստից ուսուցչուհիները մնայուն կրնան ըլլալ:

Յօդ. 192. — Մնայուն ուսուցչաց կէսը կրնայ բացակայիլ շաբաթ երեկոյէն մինչեւ երկուշաբթի առաւօտ. կարելոր գործոց համար մնայուն ուսուցիչ մը շաբթու մէջ դիշեր մը միայն կրնայ բացակայիլ:

Յօդ. 193. — Վարժարանի աշակերտաց զբաղման ժամանակացոյցը յետագան պարտի ըլլալ:

5 ժամ դասառութիւն, 4 ժամ սերտողութիւն, 3 ժամ զրօսանք, 2 ժամ ճաշ, 9 ժամ քուն, 1 ժամ առաւօտեան յարդարանք:

Յօդ. 194. — Արհեստաւոր աշակերտաց զբաղմանց ժամանակացոյցը յետագան պարտի ըլլալ:

8 ժամ արհեստական աշխատութիւն, 1 ժամ դաս, 1 ժամ սերտողութիւն, 2 ժամ զրօսանք (ցերեկ եւ երեկոյ՝ ճաշէն վերջ), 2 ժամ ճաշ, 9 ժամ քուն, 1 ժամ առաւօտեան յարդարանք:

Յօդ. 195. — Ամէն աշակերտ պարտաւոր է առաւօտեան յարդարանաց յատկացեալ մէկ ժամու մէջ իր անկողինը պատրաստել, զգեստներն ու կօշիկը մաքրել, լուացուիլ եւ սանտրուիլ:

Յօդ. 196. — Աշակերտները կիւրակէ եւ տօն օրերը՝ իրենց դաստիարակաց հսկողութեան տակ եկեղեցի կ'երթան :

Յօդ. 197. — Աշակերտք շաբաթն անգամ մը ձերմակեղէն կը փոխեն, 15 օրն անգամ մը անկողնոյ սաւան. ամիսն անգամ մը մազերնին կը կտրուի, ամիսն անգամ մը բազնիք կ'երթան եւ տարին երկու ձեռք զգեստ կ'ընդունին :

Յօդ. 198. — Որբերն ունին իրենց տրամադրութեան տակ մատենադարան մը եւ իրենց այցելուները ընդունելու խօսարան մը :

Յօդ. 199. — Որբերը կ'ընդունին շաբաթը մի անգամ բժշկական այցելութիւն. ոտքի վրայ դարմանուելու կարողները անդ դեղ կ'ընդունին, իսկ անկարողները Հիւանդանոց կը զրկուին ի դարմանումն :

Յօդ. 200. — Շրջանաւարտ որբերն եւ խալճա ելնող արհեստաւորները կը զրկուին իրենց պաշտպաններուն, անպաշտպանները հոգեզաւակ կը տրուին : Արհեստաւորները եթէ պէտք կայ՝ Հաստատութեան մէջ՝ իբր արհեստաւոր կը գործածուին, իսկ ուսմանց հետեւողները՝ եթէ յարմարութիւն ունին՝ Հաստատութեան ուսանողաց կարգը դասուելով բարձրագոյն վարժարանաց կը հետեւին (Յօդ 169) :

Յօդ. 201. — Արհեստի մէջ յաջող ուսանողներուն՝ իրենց վարպետներու առաջարկին վրայ՝ եթէ շաբաթական մը յատկացուի, ի պահ կը մնայ տեսչին քով՝ իբր անոնց ապագային դրամազուլու :

Յօդ. 202. — Հաստատութեան սնտուկէն դրամազուլու մը դրուած է արհեստից ճիւղերուն, այդ գումարով է որ կը գնուին արհեստանոցի պէտք եղած նախնական նիւթերն եւ արդիւնքն այդ գումարին վրայ կը բարդուի : Արհեստաւոր վարպետներու ամառականներն եւ աշակերտաց շաբաթականներն այդ գումարէն կը արուին : Արհեստանոցի հաշուետուները տեսուչը ինքը կը բռնէ :

Յօդ. 203. — Մանչերու Որբանոցն ունի ծառայողներու խումբ մը, որ կը բազկանայ 5 անձերէ. 1 գիշերապահ, 1

հանդերձապահ եւ կարկատիչ, 2 սեղանապետ՝ որք սնունդը կը բաշխեն եւ սեղանատան ու սպասից մաքրութեան խնամքը ունին. 1 անտես՝ որ ննջատենեակներն ու դասարանները կ'աւլէ եւ որ դռնապանի պաշտօն ալ կը վարէ :

Աղջկանց Որբանոցը կրնայ դոհանալ երեք անձերով. 1 հանդերձապահ եւ կարկատիչ, 1 սեղանապետ, 1 արնտեսուհի :

Գ. Մ Ո Մ Ա Ր Ա Ն

Յօդ. 204. — Մոմարանը Հաստատութեանս հատուց մի կարեւոր ազդիւրն է, Կ. Պոլսոյ հայազգի ժողովրդեան հարսանեաց եւ եկեղեցիներու լուսաւորութեան միակերպ աստիղնուիլը պարտաւորիչ ըրած է Ազգային Պատրիարքարանը :

Յօդ. 205. — Մոմարանի զործարանն ունի պետ մը, պաշտօնեայ մը, և ուսանող արհեստաւորներ : Պետք սրտասխանատու է՝ իր գործարանի ամէն պարագայից մտաին՝ Տընօրէնութեան եւ Հոգարարձութեան :

Յօդ. 206. — Մոմարանը քաղաքին մէջ՝ Հոգարարձութեան սենեկին կից վաճառանոց մ'ունի, ուր մասնաւոր պաշտօնեայ մ'ալ կայ գրասենեկի տեսչին հսկողութեան տակ (Յօդ. 11) :

Յօդ. 207. — Միշտ պատրաստ մթերք ունենալու համար որոշուած է որ՝ Մոմարանի մէջ 600 հօխայ եկեղեցւոյ մոմ եւ 300 հօխայ հարսանեաց մոմ գտնուի. իսկ վաճառանոցի մէջ 400 հօխայ եկեղեցւոյ եւ 600 հօխայ հարսանեաց մոմ գտնուի : Մոմարանի պետն ու վաճառող պաշտօնեան այս քանակաւ մթերք պատրաստ ունենալու պարտաւոր են :

Դ. — ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՕԺԱՆԳԱԿ ՄԱՍԵՐՆ



1. Դ Ե Ղ Ա Ր Ա Ն

Յօդ. 208. — Դեղարանը պատրաստ ունենալու է Հաստատութեան մէջ գործածուած բոլոր ընթացիկ դեղերը:

Յօդ. 209. — Թունաւոր դեղերը մասնաւոր պահարանի մը մէջ փակեալ ըլլալու են, որոյ բանալին առաջին դեղագործին քովը կը մնայ եւ զոր իր բացակայութեան միայն երկրորդ դեղագործին կը յանձնէ:

Յօդ. 210. — Ամէն ամսոյ սկիզբն առաջին դեղագործը կը պատրաստէ ամսուան մը ժամանակամիջոցին մէջ պէտք ըլլալիք դեղերու մի ցուցակը, զոր կը ստորագրէ ներքին հիւանդութեանց բաժնի բժշկապետն եւ կը զրկուի Հոգաբարձութեան գրասենեակը:

Յօդ. 211. — Դեղարանը մտած բոլոր դեղերը պէտք է որ կնքեալ անօթներով եւ ծրարներով ըլլան: Այս կնիքները կը քակուին ի ներկայութեան անօրէնին կամ իր կողմանէ կարգեալ մի պաշտօնէի եւ առաջին դեղագործին:

Այս պաշտօնէից պարտքն է ստուգել թէ՛ ընդունուած դեղերը զրկուած ցուցակին ճշդիւ կը համապատասխանեն, թէ՛ ըստ տեսակին եւ թէ՛ ըստ քանակին, եւ եթէ պակաս մը տեսնեն՝ Հոգաբարձութեան պարտին խնայել օրագրութեամբ: Եթէ զրկուած դեղօրայք գէշ տեսակէն են՝ անմիջապէս ետ կը դարձուին ի գրասենեակ Հոգաբարձութեան:

Յօդ. 212. — Այն դեղերը՝ որոնք ազդեցութիւննին կորսնցուցած կամ աւրուած ըլլալով՝ օգտակարութենէ զուրկ եւ անգործածելի դարձած են, անօրէնին ներկայութեամբ բժշկակական մարմնոյն կողմանէ քննուելով՝ կը ջնջուին, ըստ այնմ կ'արձանագրուին տուժարաց մէջ եւ կը տեղեկագրուի Հոգաբարձութեան:

Յօդ. 213. — Միայն Հաստատութեան հիւանդներուն եւ պաշտօնէից դեղերը կը պատրաստուին դեղարանին մէջ. բացառիկ պարագաներու մէջ դրսէն Հաստատութեան բըժշկաց կողմանէ քննուելու համար եկած հիւանդներու դեղագրերը կը պատրաստուին, եւ այն ալ եթէ կրնն անօրէնի հաւանութիւնն ու ստորագրութիւնը:

Յօդ. 214. — Դեղարանն եւ յարակից մասերն ու անոր գործիքները միշտ մաքուր ըլլալու են:

Յօդ. 215. — Դեղարանի պաշտօնէութիւնը կը բաղկանայ երկու դեղագործէ, Ա. եւ Բ. եւ Որբանոցէն շրջանաւարտ՝ դեղագործութեան պատրաստուող աշակերտներէ:

Յօդ. 216. — Հոգաբարձութիւնը կ'ընտրէ դեղագործները՝ որք պէտք է արուեստին քաջավարժ, վկայեալ եւ Օսմ. կայսերական վարժարանէն արտօնեալ ըլլան:

Յօդ. 217. — Ա. Դեղագործը պարտի ամէն օր բժշկական այցելութեան հետեւիլ եւ սահմանեալ դեղերը մասնաւոր տետրակի մը մէջ արձանագրել, իր բացակայութեան Բ. դեղագործը կը կատարէ այդ գործը:

Յօդ. 218. — Դեղագործները պարտին սահմանեալ դեղերը ճշդիւ կընել եւ խնամք պատրաստել, անօթներու վրայ դեղերու ներսէն կամ դրսէն գործածելի ըլլալը ցուցնող որոշիչ գոյներով պիտակ (étiquette) փակցնել, որոց վրայ գործածութեան եղանակը հայերէն լեզուաւ եւ ընթեռնի կերպով պէտք է գրեն, ու իրենց ներկայութեանը՝ իւրաքանչիւր հիւանդի դեղն իրեն յանձնեն, գործածութեան կերպն ալ ի հարկին բերանացի բացատրելով:

Յօդ. 219. — Դեղագործները (Ա. եւ Բ.) պարտին օր ընդ մէջ Հաստատութեան մէջ մնալ գիշերը, յար եւ նման օժանդակ բժշկաց որոնց հրահանգին համեմատ՝ երբոր հիւանդաց վիճակը պահանջէ, իրենց պաշտօնին գլուխը պէտք է գտնուին:

Յօդ. 220. — Ա. դեղագործը բացարձակապէս պատասխանատու է իր պաշտօնին վերաբերեալ բոլոր գործոց:

Յօդ. 221. — Ա. դեղագործը պարտի երկու տօմար ու-

նենալ, որոց մէջ դեղարանը գտնուած բոլոր դեղերուն ան-
ուանք այբուբենի կարգաւ գրուած ըլլան: Ասոնց մէկուն
մէջ դեղերու օրական սպառումը կ'արձանագրուի, իսկ միւ-
սին մէջ առաջինէն առնելով՝ ամսական սպառումը կ'արձա-
նագրուի ճշգիւ եւ կանոնաւոր կերպով, այնպէս որ ուղ-
ուած ատեն եւ մասնաւորաբար ամսվերջին՝ անմիջապէս ու
դիւրութեամբ հաշուելիւ մը կարելի ըլլայ պատրաստել:

Յօդ. 222. — Ա. դեղագործը պարտի վիրարութեան
գործողութեանց աջակցիլ, եթէ իր ծառայութիւնը կը թոյ-
լատրէ:

Յօդ. 223. — Առանց բանաւոր պատճառի բացակայ ե-
ղող դեղագործը իր ամսականին համեմատութեամբ օրականը
կը տուժէ:

Յօդ. 224. — Առանց ազգարարութեան 15 օր բացա-
կայ գտնուող դեղագործը հրաժարեալ կը համարուի:

2. ՀԱՆԴԵՐՃԱՍԹԻՆ, ՋԵՐՈՅ, ԼՈՒՍՅԱՐԱՆ

ՅՆՅՈՏԱՏՈՒՆ, ԲԱՂՆԻՔ

Յօդ. 225. — Հանդերձապետի հսկողութեան տակ կը
գտնուին Հաստատութեան հանդերձատունը, կարասեաց ու
գոյից մթերանոցները, հախանեխտիան ջերոցը, լուացարա-
նը, բաղնիքն եւ ցնցոտանունը: Հանդերձապետը պա-
տասխանատու է Տնօրէնութեան, Տիկնանց Խնամակալու-
թեան եւ Հոգարարութեան:

Յօդ. 226. — Հանդերձապետը պարտի մի մասնաւոր
տեսարակի մէջ արձանագրել Հաստատութեան հանդերձա-
տան եւ գոյից մթերանոցի մէջ մտնող եւ ելնող ամէն ինչ
եւ մանրամասնաբար:

Յօդ. 227. — Հանդերձապետի յարաբերութիւնները
յարկերու պետերու հետ ըլլալով՝ անոնց իւրաքանչիւրի հետ
կրկին հաշիւ մը բացած է, մասնաւոր տոմարաւ մը՝ եւ մին-

չեւ որ յարկերէն ազտուած, մաշած, փտած ու կտրտած
նիւթերը չստանայ ու զանոնք չարձանագրէ տեսարակին մէջ՝
կարող չէ անոնց փոխարէնը տալ:

Յօդ. 228. — Հանդերձատունն ունենալու է պատասպա-
րելոց թուոյն կրկին քանակաւ սաւան եւ եռապատիկը շա-
պիկ, վարտիք, գիշերանոց, գուլպա, անձեռոց ու թաշկի-
նակ:

Յօդ. 229. — Հանդերձապետը պարտաւոր է հանդեր-
ձատան մէջ պատրաստ ունենալ միշտ պատասպարելոց ձեր-
մակեղէնի մէկ շարթուան պէտքը, հանդերձապետն իր
պէտքերն ամիս մ'առաջ պարտի խմայնել Տնօրէնութեան,
որպէսզի ժամանակին կարենան պատրաստուիլ: Հանդերձա-
պետը պարտի ձմեռնային զգեստներն ամառուընէ պատ-
րաստել տալ եւ փոխադարձաբար:

Յօդ. 230. — Հաստատութեան պատասպարեալք առ հա-
սարակ շաբաթն անգամ մը ձերմակեղէն կը փոխեն, 15 օրն
անգամ մը սաւան, տարին երկու անգամ զգեստ, կօշիկ,
գլխարկ (ամառնայինն՝ Որբանոցի համար Չատկին, եւ այլ
պատասպարելոց համար Համբարձման, իսկ ձմեռնայինն՝ ամե-
նուն համար Նոյեմբերի սկիզբները):

Յօդ. 231. — Զգեստ կը շինուի նաեւ տարին երկու ան-
գամ այն ամէն պաշտօնէից համար՝ որք 150 զրշ.էն նուազ
ամսական ունին:

Յօդ. 232. — Տարափոխիկ հիւանդութեամբ վարակելոց
ձերմակեղէններն, անկողնոյ կազմածներն ու անոնց ծառա-
յող ամէն առարկաներ՝ բժշկաց հրամանաւ եւ ընդ հսկողու-
թեամբ հանդերձապետին՝ պէտք է հախանեխտին ջերոցի
(étuve) միջոցաւ եւ հուսկ ուրեմն անոնցմէ լուացուելիքները
լուացարան կը յանձնուին: Այլ եւ այլ պարագայից մէջ նոյն
իսկ կ'այրուին բժշկաց հրամանաւ:

Յօդ. 233. — Հանդերձապետը պարտի հսկել լուացք-
ներու մաքրութեան, պատասպարելոց զգեստեղինաց ու ձեր-
մակեղինաց ժամանակին փոխուելուն ու կարկտուելուն:

Յօդ. 234. — Լուացարանը կը բաժնուի 4 մասերու:

Ա. Լուսացքի սրահ, Բ. Չորցնելու սրահ, Գ. Կարկը-
տուքի սրահ: Դ. Արդուկի սրահ, որոց ընդհանուրին հսկող
կարգուած է մի պետ լուսացարարուհի եւ որ պատասխանա-
տու է հանդերձապետին, Տնօրէնութեան եւ Տիկնանց Խնա-
մակալութեան:

Յօդ. 235. — Հանդերձապետը համբերով կը յանձնէ
ճերմակեղէնները լուսացարանի պետին, ըստ այնմ կ'արձա-
նագրէ իր տետրակին մէջ եւ այդ հաշուով անկէ կը պա-
հանջէ:

Յօդ. 236. — Լուսացարանի պաշտօնէից մի մասը Հաս-
տատութեան Կանանց Անկելանոցի եւ Ծերանոցի պատըս-
պարեալներն են, եւ մի մասը դրսէն օրականով աշխատող-
ներ:

Յօդ. 237. — Բաղնիքն ունի մի պաշտօնեայ, որ եւ
Ղեռուցիչն է բաղանեայ եւ լուսացարանի կաթսաներուն, եւ
որ հականեխիչ Ղեռուցի պաշտօնեան է միանգամայն:

Յօդ. 238. — Յնցոտատուն կ'անուանուի հիւանդաց ու
յիմարաց սեփական զգեստներու մթերանոցը, Այդ մթերա-
նոցի մէջ իւրաքանչիւրին զգեստը մաքրուելէ վերջ՝ մասնա-
ւոր թուագրեալ պարկի մը մէջ դետեղուած է: Հիւանդներն
ու յիմարներն արձակուելուն միայն՝ իրենց զգեստներն ա-
նոնց կը տրուի: Մեռնող հիւանդաց ու յիմարաց զգեստե-
ղէնները Հաստատութեան կը մնան եւ կը վաճառուին հնա-
վաճառաց ամէն ամսոյ վերջ:

Յօդ. 239. — Հանդերձապետն իր առօրեայ գործողու-
թեան մի յայտագիրը պարտի շաբաթն անգամ մը ներկայել
Տնօրէնութեան ի քննութիւն եւ ի ստորագրութիւն:

Յօդ. 240. — Հանդերձապետն ամսվերջին Հաստատու-
թեան բոլոր գոյից մի ցուցակը կը պատրաստէ:

Յ. Մ Ա Ռ Ա Ն

Յօդ. 241. — Հաստատութեան մառանն ունի մի մասնա-
ւոր պաշտօնեայ, որ պարտի մառանը մաքուր պահել, նպա-
րեղէններն եւ այլ սնունդները լաւ եւ խնամով պահպանել ու

ամէն անգամ սննդեղէն ընդունելուն՝ հակահսկող պաշտօնէին
հետ չափել, համրել ու կշռել եւ ըստ այնմ իր տոմարի
մտից կողմը գրել: Խոհանոցի ամենօրեայ պիտոյից քանակը
Տնօրէնութեան գրասենեկի կողմանէ մարդահամարի վրայ
պատրաստուած եւ Տնօրէնութեան կողմանէ ստորագրեալ
ցուցակի համաձայն՝ խոհարարապետին յանձնել եւ ըստ
այնմ իր տետրակի ելից կողմն արձանագրել: Առանց տը-
նօրէնի կամ անոր փոխանորդին ստորագրութիւնը կրող թղթի,
մառանապետը որ եւ է սննդեղէն չէ կարող յանձնել եւ
յանձնածը միշտ պարտի արձանագրել իր տոմարին մէջ:

Յօդ. 242. — Մառանապետին յանձնուած է նաև փայտի,
ածուխի, քարիւղի մթերանոցները ու անոնց մատակարար-
ութիւնը եւ Անասնարանի վերին հսկողութիւնը:

Յօդ. 243. — Մառանն ունի մի մասնաւոր տօմար, որոյ
իւրաքանչիւր էջն մէկ աւուր յատկացեալ է, ուր տպագրեալ
են սննդեղէններու ցանկն, որոց առջեւ իւրաքանչիւր օր
ընդունուածն ու մխտուածը կը գրուի, և որոց տարբերութիւնը
կը ցուցնէ իւրաքանչիւր նիւթի երեկոյեան մնացած քա-
նակն, որ կ'անցուի յաջորդ աւուր էջին վրայ: Այս տօմարը
կը կազմէ մառանի հաշոյն խարխիւր:

Յօդ. 244. — Մնուկը մարդահամարի վրայ հաշուուած
են (ինչպէս ըսինք) և իւրաքանչիւր բաժնի տարերք որոշ-
ուած են ըստ յետագային:

	Հաց	1 բաժին	25 տրմ. (մինչ 8 բաժին)
Միս	Խաչլամա	1 »	60 »
	Քիւլպաստը	1 »	35 »
	Խըզարթմա	1 »	60 »
	Պաստը	1 »	40 »
Բրինձ	Սպուր	1 »	30 »
	Ապուր	1 »	10 »
	Կաթնապուր	1 »	6 »
	Լափա	1 »	15 »
	Բիլավ	1 »	20 »
	Պուլի բիլավ	1 »	25 »

Հիւանդաց համար
Այլոց »

Մախանա	1բածին	30 տրամ
Գեանախնձ	1 »	70 »
Լուրխ	1 »	20 »
Սխեռ	1 »	25 »
Պավեայ	1 »	8 »
Բանջարեղէն	1 »	100 »
Սալոր	1 »	20 »
Իրմիկ հէլվա	1 »	20 »
Շէքէր	» 1 »	20 »
Մսի ջուր	1 »	100 »
Կաթ	Չուտ	1 » 100 »
	Կաթնապուր	1 » 100 »
	Մածուն	1 » 100 »
Սառտէլա	1 »	2-3 հատ
Պանիր	1 »	10 տրամ
Զիթ-ապտուղ	1 »	10 »
Իւղ	բիլավի համար	1 » 5 »
	հէլվայի »	1 » 8 »
Զէթ եահնիի	» 1 »	5 »

Յօդ . 245 . — Մառանապետը պարտի մառանի պէտքերն ու պահածները դոնէ սպառելէ շարաթ մ'առաջ ծանուցանել Տնօրէնութեան Դիւանին՝ որ անմիջապէս տեղեկութիւն տայ Հոգարարձութեան գրասենեակին :

Յօդ . 246 . — Երբ զրկուած նպարեղինաց և ուտեստից տեսակը աղէկ չէ և փնասակար կը նկատուի առողջութեան , մառանապետը պարտի ազդարարել Տնօրէնութեան , որ դանոնք օժանդակ բժշկաց քննութեան կ'ենթարկէ և եթէ փնասակարութիւնը հաստատուի , յետո կը դարձնէ ի գրասենեակ Հոգարարձութեան : Հակառակ պարագային մառանապետը պատասխանատու կը ճանչցուի :

Յօդ . 247 . — Լուսաւորութեան համար ընդհանրապէս քարիւղ կը գործածուի . մառանապետը իւրաքանչիւր ճրագի համար ձմեռը՝ օրական 40 տրամ , աշնան և գարնան 30 , իսկ ամառը 20 տրամ քարիւղ կը յանձնէ լուսաւորութեան պաշտօնէին :

4. Ա Ն Ա Ս Ն Ա Ր Ա Ն

Յօդ . 248 . — Անասնարանն երկու մասերէ կը բաղկանայ . Ա . Գոմ , ուր կը գտնուին Հաստատութեան կաթ մատակարարող կովերն , և Բ . Ախոռ , ուր կը գտնուին Հաստատութեան պիտոյից տեղափոխութեան համար կառքի ձիեր : Անասնարանի պաշտօնէից պարտքն է իրենց յանձնուած կենդանիները լաւ խնամել և անոնց յարկերը մաքուր պահել :

Յօդ . 249 . — Գոմն ունի մի պետ և մի օշնական , իսկ Ախոռն՝ երկու պաշտօնեայ , որք և կառապան են :

Յօդ . 250 . — Անասնարանի պաշտօնեաներն իրենց կենդանեաց պէտքերը կանխաւ պարտին մառանապետի միջոցաւ Տնօրէնութեան գրասենեակին ծանուցանել ժամանակ առաջ , որպէսզի կարենայ դանոնք ճարել :

Յօդ . 251 . — Ամէն օր Գոմի գլխաւոր պաշտօնեան չափելով մառանապետին կը յանձնէ կենդանեաց արտադրած կաթն և երբեք այլոց :

5. Խ Ո Հ Ա Ն Ո Ց

Յօդ . 252 . — Խոհանոցն ունի մի խոհարարապետ և օգնականներ :

Յօդ . 253 . — Խոհարարապետն ըստ Տնօրէնութեան կողմանէ ստացած ճաշացուցակին և մարդահամարի հաշույ՝ պէտք եղած պարէնները (Յօդ . 244) մատակարարէն ընդունելով կը պատրաստէ կերակուրները :

Յօդ . 254 . — Երկու կարգի կերակուր կը պատրաստուի Հաստատութեան մէջ : Ա . Հիւանդարանի սնունդ , Բ . Այլ պատսպարելոց սնունդ : Առաջինն աւելի խնամեալ պարտի պատրաստուիլ :

Յօդ . 255 . — Բժշկաց առաջարկին վրայ՝ երբեմն հիւանդաց մասնաւոր կերակուր կրնան պատրաստուիլ :

Յօդ. 256. — Պաշտօնէից երեք սեղան կայ :

Ա. Սեղան : ուր կը ճաշեն տնօրէնը, հոգեւոր հովիւը, բժիշկները, Ա. դեղագործն ու դիւանապետն, եւ ունին մի սեղանապետ :

Բ. Սեղան, ուր կը ճաշեն օգնական դեղագործները, հանդերձապետը, մառանապետը, Յիմարանոցի, Մերանոցի եւ Մոմարանի պետերը, արհեստաւորաց պետերը : Այս պաշտօնեայք ունին մի մասնաւոր սեղանապետ :

Գ. Սեղան, ուր կը ճաշեն մայրապետները, կանանց Յիմարանոցի պետն եւ Լուացարանի պետը :

Այլ պաշտօնեայք իրենց պաշտօնատեղին կը ճաշեն :

Յօդ. 257. — Խոհարարապետը պարտի խոհանոցի եւ համայն կազմածի մաքրութեան հսկել ու ի հարկին անագել տալ պանոնք :

Յօդ. 258. — Աւրուած կերակուրները տնօրէնին գիտութեամբ թափել :

Յօդ. 259. — Խոհանոցի պաշտօնեայք արտօնեալ չեն իրենց կամ ուրիշներու համար մասնաւոր կերակուր պատրաստել :

Յօդ. 260. — Բաց ի տնօրէնէ որ եւ է պաշտօնեայ դրսէն անձ մը ի ճաշ չ'կրնար հրաւիրել :

Յօդ. 261. — Հաստատութեան համայն պատասպարեալք օրն երեք անգամ ճաշ կ'ընեն, առաւօտուն ժամը 7ին, 11ին եւ երեկոյեան՝ ձմեռը 4ին եւ ամառը 6ին (Բ. Ե.) :

Յօդ. 262. — Նախաճաշը կը կազմէ ընդհանուր պատրաստութեան համար թէյ, սուրճ, կաթ, պանիր, ձիթապտուղ : Հիւանդաց համար սպուր, լարա, հաւկիթ, կաթ, կաթնապուր :

Յերեկուան եւ երեկոյեան մէկ տեսակ կերակուր պատրաստութեան, բարձրագոյն պաշտօնէից երկու տեսակ, իսկ հիւանդներու ընդհանրապէս մէկ տեսակ, բժշկաց հրամանաւ աւելի կրնայ ըլլալ :

Գ. ԱՐՀԵՍՏԱԻՈՐՔ

Յօդ. 263. — Հաստատութեան մէջ կը գտնուի արհեստաւորաց խումբ մը միայն Հաստատութեան պիտոյից համար, որոց թիւը կրնայ աւելնալ կամ պակսիլ ըստ պիտոյից : Այժմ անդ ներկայ եղողներն են . ատաղձագործ, թիթեղագործ, երկաթագործ, հնակարկատ - կոշկակար, դերձակ, հիւսն, անագիչ, մեքենավար, ջուհակ, որք ամէնն ալ ամսականաւոր վարպետներ են :

Յօդ. 264. — Այս արհեստաւորներէն ոմանց քով արհեստն ուսանող պատանիներ կը գրուին ըստ Յօդ. 173ի եւ 174ի տրամադրութեանց :

Յօդ. 265. — Այս արհեստաւորք երբեք դրսի գործ ընելու չեն :

Յօդ. 266. — Արհեստաւորները կիւրակէ եւ տօն օրերէ դատ՝ ամէն օր իրենց գործին գլուխը գտնուելու են . առանց բանաւոր պատճառի բացակայք՝ իրենց անասկանի համեմատական օրականը կը կորսնցնեն : 15 օր բացակայողը կը հըրաժարեցուցուի :

Յօդ. 267. — Արհեստաւորք ըստ Տնօրէնութեան հրամանին եւ հրահանգաց պարտին հոգալ Հաստատութեան պէտքերը :

Յօդ. 268. — Արհեստաւորք արհեստը սորվեցնելու խնամքն ունենալու են՝ իրենց օգնական տրուած աշակերտաց :

Յօդ. 269. — Արհեստաւորաց քով աշխատող աշակերտներն եթէ յառաջդիմեն՝ անոնց շարաթական մը կը յատկացուի . այդ գումարի մի մասն միայն իրենց կը յանձնուի իսկ մնացեալն ի պահ կը մնայ Տնօրէնութեան քով (Յօդ. 174) :

7. Հ Ա Կ Ս Հ Ս Կ Ո Ղ

Յօդ. 270. — Հակահսկողը մտից դրան քով ունի իր խուցն, ուր մտնող եւ ելնող բոլոր առարկաներն՝ իրեղէն, նպարեղէն, հաց, ածուխ, փայտ, եւն, կշռելով, չափելով, համբերով՝ դանոնք իրենց յատուկ պաշտօնէից կը յանձնէ, եւ ըստ այնմ արձանագրելով ամէն երեկոյ Տնօրէնութեան դիւանին կը յանձնէ:

8. Դ Ո Ն Ս Պ Ս Ն

Յօդ. 271. — Հաստատութիւնը ունի մի քանի դռներ, որոց մին միայն բաց է, այլք փակեալ են ու լանտիները Տնօրէնութեան քով կը դանուին, առանց որոյ հրամանին չեն բացուիր:

Յօդ. 272. — Պաշտօնական բաց դրան կից խցիկին մէջ կըսպասէ դռնապանն՝ որ այդ դուռն ի ծագել արեւու կը բանայ եւ երեկոյեան ժամը 12¹/₂ անցած (Ը. Թ.) գոցելով՝ բանալին Տնօրէնութեան կը յանձնէ, հետեւաբար գիշեր ատեն առանց Տնօրէնութեան գիտակցութեան դուռ չ'բացուիր:

Յօդ. 273. — Ի բաց առեալ բարձրագոյն պաշտօնէութիւնը՝ ոչ ոք առանց դիւանէն ընդունած փոխանիչի՝ չէ կարող դանէն դուրս ելնել:

Յօդ. 274. — Հրամանաւ դուրս ելնող պաշտօնեայք իսկ դրան գոցուելէն առաջ վերադառնալու են:

Յօդ. 275. — Դռնապանը պարտաւոր է դանէն մտնող եւ ելնող պաշտօնէից եւ այցելուաց ծրարներն խուզարկել:

9. Մ Ս Տ Ո Ւ Ռ

Յօդ. 276. — Հաստատութեան մատուան ունի 3 անձերէ բաղկացեալ պաշտօնէութիւն մը: Հոգեւոր հովիւ, Քահանայ եւ լուսարար, որք կը կատարեն ժամասացութիւնները, կտակաւ ընդունուած հոգւոյ պաշտօնները: Հոգեւոր հովիւը ու քահանան հոգեւորապէս կը մխիթարեն պատուարեալներն ու կը կատարեն անոնց կրօնական պարտականութիւնները, (նամանաւանդ ծանր հիւանդներու եւ հոգեւարքաց) եւ կը կատարեն թաղումները ու մկրտութիւնները:

Յօդ. 277. — Մատրան պաշտօնէութիւնը գիշերը Հաստատութեան մէջ կը մնայ:

10. Մ Ս Տ Ն Ս Գ Ս Ր Ա Ն Բ ԵՒ Գ ԻՒ Ա Ն

Յօդ. 278. — Հաստատութիւնը ունի մի Մայր Մատենադարան, որոյ պահպանութիւնը յանձնուած է Տնօրէնութեան դիւանապետին, եւ 4 մասնական մատենադարաններ:

1. — Բժշկական մասեճագարան՝ միայն բժշկական գրքերէ բաղկացեալ. Հիւանդանոցի տեսչին հսկողութեան յանձնուած:

2. — Հիւանդաց մասեճագարան՝ հիւանդաց ընթերցանութեան յատուկ հրահանգիչ գրքերէ բաղկացեալ՝ հսկող մայրապետաց խնամոց յանձնեալ:

3. — Ծերանոցի մասեճագարան՝ Ծերանոցի պետի խնամոց յանձնեալ:

4. — Մասեճագարան Որբանոցի՝ դասական դպրոցական գիրքերէ բաղկացեալ, ընդ հսկողութեամբ Որբանոցի տեսչին:

Այս մասնական մատենադարանաց հսկողներն պատաս-

խանատու են դիւանապետին՝ որ ամիսն անգամ մը այս մասնական մատենադարանաց քննութեան կ'ելնէ :

Յօդ. 279. — Հաստատութիւնը ունի եւ դիւան մը, ուր կը պահուին Հաստատութեան բոլոր տետրակներն եւ թըղթեղէնները :

11. ՊԱՇՏԷՋ ԵՒ ՀՐԱՊԱՐԱՆ

Յօդ. 280. — Հաստատութիւնը ունի մի մնայուն պարտիզպան՝ որոյ օգնականներ կը տրուին Անկեղանոցի եւ Յիմարանոցի պատսպարեալներէն :

Յօդ. 281. — Հաստատութեան մէջի եւ իր շրջապատի մաքրութեան հսկողութիւնը մասնաւոր պաշտօնէի մը յանձնուած է, որոյ ի հարկին Անկեղանոցի եւ Յիմարանոցի պատսպարեալներէն օգնականներ կը տրուին :



Ե. — ՊԱՇՏՈՆԷԻՅ ՄԱՍԻՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԳՐՈՒԹԻՒՆՔ



Յօդ. 282. — Պատժոյ ենթակայ են կանոնադրութեան ողւոյն եւ տրամադրութեանց հակառակ վարուող ամէն պաշտօնեայք :

Յօդ. 283. — Պաշտօնաներն երկու կարգի կը բաժնուին : Բարձրասիճանի կ'անուանուին Հոգարարձոթեան գրասենեկի տեսուչն ու քարտուղարը, Հաստատութեան տնօրէնը,

Ա. քարտուղարը, Բժշկական մարմինը, հսկող մայրապետները, Յիմարանոցի, Մերանոցի, Որբանոցի ու Մոմարանի պետերը, Ա. դեղագործը, հանդերձապետը, մառանապետը, խոհարարապետը, հոգեւոր հովիւն եւ Մատրան քահանայն, որք ուղղապէս Հոգարարձոթեան կողմանէ կ'ընտրուին եւ իրենց թերութեանց մասին Հոգարարձոթիւնն ուղղապէս ե կամ տնօրէնի ազդարարութեան վրայ միայն՝ կը տնօրինէ պէտք եղած պատիժն՝ ուղղապէս եւ կամ տնօրէնին միջոցաւ : Միայն ծանր եւ ստիպողական պարագաներու մէջ՝ երբ Հոգարարձոթեան ծանուցանելու եւ անկէ հրահանգ ստանալու ժամանակամիջոցը չներեր՝ տնօրէնը իր պատասխանատուութեամբ առժամանակեայ կերպով յանցապարտը կը դադրեցնէ իր պաշտօնէն եւ Հոգարարձոթեան որոշման կը ըստ պատէ : Մնացեալ պաշտօնեայք ստորակարգ կ'անուանուին եւ Տնօրէնութեան կողմանէ կ'ընդունին իրենց պատիժն եւ զոր Տնօրէնութիւնը կը տեղեկագրէ Հոգարարձոթեան ի տեղեկութիւն :

Յօդ. 284. — Երբ ստորադաս պաշտօնեայ մը ծանր յանցանքի մ'ամբաստանութեան տակ կը գտնուի, տնօրէնը նախնական քննութիւն մը կ'ընէ եւ ներկայութիւնին պէտք եղած տեսուչները եւ պետերը ի ժողով գումարելով անոնց խորհրդակցութեան արդիւնքը կը տեղեկագրէ Հոգարարձոթեան ի պարտ ու պատշաճ տնօրէնութիւն :

Յօդ. 285. — Բարձրաստիճան պաշտօնէից մասին Հոգարարձոթիւնն եթէ հարկ համարի, անձամբ քննութիւն կը կատարէ :

Յօդ. 286. — Պատիժները 4 կարգի կը բաժնուին : Ա. թեթեւ յանցանաց համար Հոգարարձոթիւնը կամ Տնօրէնութիւնը բերանացի ազդարարութիւն մը կ'ընէ առաջին անգամ : Բ. եթէ թեթեւ յանցանքները կրկնուին՝ Հոգարարձոթիւնը կամ Տնօրէնութիւնը գրաւոր ազդարարութիւն կ'ընեն : Գ. եթէ թերութիւնները կարեւոր են եւ կամ ստէպ տեղի կ'ունենան՝ ամսականի մի մասը կը գեղջուի : Դ. Մեծ յանցանաց համար պաշտօնէ կը դադրեցուցաին :

Յօդ. 287. — Եթէ բարձրագոյն պաշտօնեաները հրաժարիլ ուզեն՝ պարտին մէկ ամիս առաջ մատուցանել իրենց գրասոր հրաժարագիրն առ Հոգաբարձութիւնն, իսկ ստորագաս պաշտօնեաներն 15 օր առաջ Հոգաբարձութեան սենեկի եւ կամ Հաստատութեան Տնօրէնութեան. հակառակ պարագային առաջինները մէկ ամսական, իսկ վերջինները կէս ամսական կը կորսնցնեն :

Յօդ. 288. — Պաշտօնեաներն առ հասարակ մէկ ամսական պահանջ ունենալու են :

Յօդ. 289. — Պաշտօնեայք Տնօրէնութեան եւ կամ իրենց պետերու առաջարկին վրայ պարգեւներ կ'ընդունին Հոգաբարձութենէն՝ Համբարձման տօնին առթիւ :

2. — ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ

1. ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ ՀԻՒՍՆԴԱՆՈՅԻ

Յօդ. 290. — Հիւանդաց այցելութիւնք տեղի կ'ունենան կիրակիէ, երեքշաբթի, ուրբաթ եւ այլ տօնական օրերը կէս օրէ ետք :

Յօդ. 291. — Այցելուք Տնօրէնութեան յարկէն հրաման առնելով միայն կրնան Հիւանդանոց մտնել :

Յօդ. 292. — Այցելուք Հիւանդանոցի դռնապանին կողմանէ պարտին խուզարկուիլ, զի մի գուցէ իրենց հիւանդաց արգիլեալ սնունդ տանին :

Յօդ. 293. — Հիւանդանոցի հիւրանոցին մէջ կ'ընդունուին այցելուներն, ուր կուզան տեսնուիլ իրենց հիւանդները,

տակայն եթէ տանք անկարող են անկողնէն ելնելու՝ այցելուներն անոնց անկողնոց քով կ'երթան :

2. ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ ՅԻՄԱՐԱՅ

Յօդ. 294. — Յիմարաց ծնողք կամ ազգականք յիմարարուժին դառնաւ ժամերուն և անոր արտօնութեամբ միայն կրնան տեսնել զանոնք :

Յօդ. 295. — Հիւանդաց այցելութեան մասին 290, 292, 293 յօդուածոց արամադրութիւնք նոյնն են յիմարաց համար եւս :

3. ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ ԾԵՐԱՆՈՅԻ ԵՒ ԱՆՆԵԼԱՆՈՅԻ

Յօդ. 296. — Հիւանդանոցի այցելութեանց օրերուն եւ միեւնոյն ժամերուն տեղի կ'ունենան և ծերերուն ու անկեալներուն այցելութիւնք :

4. ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ ՈՐԲԱՆՈՅԻ

Յօդ. 297. — Միայն կիրակիէ օրերն կէս օրէ վերջ եւ միեւնոյն ընդհանուր պայմաններու տակ տեղի կ'ունենան :

5. ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ

Յօդ. 298. — Հոգաբարձութեան և կամ տնօրէնի հրամանաւ և հիւանդաց այցելութեան օրերն կրնան տեղի ունենալ, և տնօրէնին կողմանէ սահմանեալ պաշտօնէի մը առաջնորդութեամբ :

Յօդ. 299. — Բացառիկ պարագաներու մէջ ամէն օր և ամէն ժամ այցելութիւնք կրնան տեղի ունենալ : Այցելու մը ազատ է իր դիտողութիւնները ու դանդաասները Տնօրէնութեան սենեակը՝ մասնաւոր տեսարակի մը մէջ գրել, ուղղակի

կի Հոգաբարձութեան գրասենեակը ղրկել, և կամ տնօրէնին սենեկին մէջ գրելով զանոնք և պահարանի մը մէջ ամփոփելով՝ հոն ձգել. տնօրէնը պարտաւոր է զայն անմիջապէս հասցնել Հոգաբարձութեան:

Է. Վ Ե Ր Ա Ք Ն Ն Ո Ի Թ Ի Ի Ն

Յօդ. 300. — Ներկայ կանոնագիրը գործադրութեան կը դրուի 1901 Յունվար 1 էն սկսեալ:

Յօդ. 301. — Հոգաբարձութիւնը ի հարկին պատշաճ դատած բարեփոխութիւնները կրնայ ընել և վարչութեան հաղորդել և երբ անոնց թիւը շատնայ՝ սրբագրեալ կանոնագիր մը առաջարկել Ազգային Կեդրոնական վարչութեան:

Ազգային Կեդրոնական վարչութեան Խառն Ժողովն 1900 Նոյեմբեր 17ի նստին մէջ սոյն կանոնագիրն ընդունած և հաստատած լինելով՝ ըստ այնմ կը յանձնարարեմք ի գործադրութիւն:

Պատրիարք Կ. Պոլսոյ

Մ Ա Ղ Ա Ք Ի Ա Ա Ր Ք Ե Պ Ի Ս Կ Ո Պ Ո Ս

17 Նոյեմբեր 1900
Ի Պատրիարքարանի Հայոց
և Պալատ



Յ Ա Ն Կ Ն Ի Ի Թ Ո Ց

Ա. Վ Ա Ր Ի Ջ Խ Ա Ր Մ Ի Ն Ք

1. Հոգաբարձութիւն	5
2. Խնամակալութիւն	6
3. Գրասենեակ՝ Հոգաբարձութեան	6

Բ. Տ Ն Օ Ր Է Ն Ո Ւ Թ Ի Ի Ն

1. ՏՅօրէն	8
2. Փոխ-ՏՅօրէն և ԲՅՈՒՅ	9
3. Գրասենեակ ՏՅօրէնութեան	9
4. Սպասարկուի ՏՅօրէնութեան յարկի	10

Գ. Հ Ա Ս Ս Ա Տ Ո Ւ Թ Ե Ա Ն Ճ Ի Ի Ղ Ե Ր Ը

1. Հիւանդանոց	11
Ա. Հիւանդասրահք	11
Բ. Ընդունելութիւն հիւանդաց	13
Գ. Հիւանդք	14
Դ. Պաշտօնէութիւն Հիւանդանոցի	15
1. Տեսուչ	16
2. Բժշկական մարմին	16
3. Հսկող Մայրապետը Հիւանդանոցի	20
4. Վիրադարմանք	20
5. Հիւանդապահք	21
6. Մատակարար, Մանրոց բաշխիչք, Լոգարանի պաշտօնեայ, Սափրիչ և Դռնապան	22
2. Յիմարանոց	23
Ա. Յիմարասրահք	23
Բ. Ընդունելութիւն յիմարաց	25
Գ. Յիմարք	25
Դ. Պաշտօնէութիւն Յիմարանոցի	27
1. Բժշկական մարմին	27
2. Յիմարապահք	29

3. Ծերանոց եւ Անկէլանոց	30
4. Ուսանողք	32
5. Որբանոց	33
6. Մումարան	37

Դ. ՀԱՍՏԱՏՈՒԹԵԱՆ ՕԺԱՆԴԱԿ ՄԱՍԵՐԸ

1. Դեղարան	38
2. Հանդերձատուն , Ջերոց , Լուացարան , Յնցոսատուն , Բաղնիք	40
3. Մառան	42
4. Անասնարան	45
5. Խոհանոց	45
6. Արհեստաւորք	47
7. Հակահսկող	48
8. Դռնապան	48
9. Մասուռ	49
10. Մասենադարան եւ Դիւան	49
11. Պարտեզ եւ Հրապարակ	50

Ե. ՊԱՇՏՈՆԷՅՑ ՄԱՍԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՏՐԱՄԱԴՐՈՒԹԻՒՆՔ

Ձ. ԱՅՑԵԼՈՒԹԻՒՆՔ

1. Այցելուքիւնք Հիւանդանոցի	52
2. » Յիմարանոցի	53
3. » Ծերանոցի եւ Անկէլանոցի	53
4. » Որբանոցի	53
5. » Ընդհանուր Հաստատութեան	53

Է. ՎԵՐԱՔՆՆՈՒԹԻՒՆ



ՀՀ Ազգային գրադարան



NL0835021

